ԽԱԲԱՐԲԱՌԻԿ

«Մանկանց երկիրը» մանկապատանեկան ալմանախի հավելված I 3'2018

Լուսանկարը՝ Հռիփսիմե Բաղդասարյանի

ՄԵՇՔ ԵՇՔ ՏԵՐԸ
ՄԵՐ
ԵՐԿՐԻ...
#դուխով

Լուսանկարը՝ Միլենա Խաչիկյանի

Դեպի ջահել ազատություն

Առավոտյան 7-ին մտածում էի՝ գնամ-չգնամ, որովհետեւ դասերից հետո հաստատ միանալու էի ժողովրդին, չգիտեմ ինչու որոշեցի, որ գնամ: Ու 8.30 դուք պետք է տեսնեիք՝ ոնց մի խումբ ջահելներով նստեցինք փողոցի մեջտեղում, փակեցինք փողոցները (բժշկականի մոտ = ուսանողական տարածք): Հետո իմանում էինք, որ մետրոյում պառկում են դռան առաջ, ու ոգևորվում էինք:
Մարդիկ մասիվից, Կոմիտասից ու լիքը տեղերից ոտքով իջնում էին կենտրոն:
Էս բոլոր պահերին ուզում ես մի քանի մարդ դառնաս, որ ամեն տեղ լինես, որ ոչ մի բան բաց չթողնես, որովհետև ամեն ինչ չափից դուրս ոգևորող է:
Համալսարանների մոտով քայլեցինք ու եկանք հետ՝ ընդմիջում անելու:
Դրանից հետո իջանք օպերա՝ Ռոդենի արձանի մոտ, ինչ խոսք՝ Հայկոյի խոսքը ոգևորիչ էր:
Երբ այդքան մարդ ես տեսնում մի տեղ՝ ջահելներ, ծյածյաներ, մորքուրներ, տատի ու պապիներ, չես կարող չոգևորվել: Հետո քայլեցինք ո՞ւր: Հա, մեր սիրելի ԱԺ:
Երբ առաջ ես նայում՝ ծայր չկա, հետ ես նայում՝ ծայր չկա, հասկանում ես, որ քո «դեմ խաղ էլ չկա»: Ծափեր, ծափեր, ծափեր… Կոչեր, «Ոստիկան, միացիր»-ներ (թե ո՞ւմ ենք խաբում) ու հետո ուժեղ ձայն (կրակոցի նման): Վախենալու էր, հատկապես մեր նման վախկոտների համար: Ձյածյաներն ասացին՝ վերջ, էլ չեն անի, մի վախեցեք:
Հետո մի հատ էլ, արդեն մեր ուղղությամբ: Հետո մի հատ էլ, մի հատ էլ… Ու արդեն Սարյանի այգում ենք՝ լացելով, չհասկանալով՝ էս ի՞նչ էր, ո՞նց, ինչո՞ւ…
Էս կարծ էն մասին, թե ինչ կատարվեց:
Չեմ խոսում ընթացքում պատմությունների մասին, թե ամեն փողոցում ոնց են մարդ «տփել», ով ինչ է ասել, ինչով են վախեցրել և այլն, ուժեղ ձայներից հետո մարդկանց վնասվածքների, դիմացը կանգնած աղջիկների վախերի, ուշաթափությունների մասին պատմություններ, ու ամբողջ Սարյան իջնելու ճամփին լաց, լաց, ու «Մի վախեցեք, բալեք»-ներ…
Նստած մտածում ես՝ լավ, ինչի՞:
Չեմ խոսի սենտիմենտալ բաներից (ասենք՝ որտեղի՞ց էս մարդկանց էսքան չարություն), քանզի ամեն ինչ հարթ լինել չէր էլ կարող:
Հա, ես քաղաքականությունից շատ բան չեմ հասկանում, բերման ենթարկվելու դեպքում իմ իրավունքներին էլ էսօր եմ ծանոթացել, բայց դա ինձ չի խանգարել, որ գնամ ու կանգնեմ էդ մարդկանց հետ: Որ էսօր ծաղիկ բռնեմ ձեռքիս, ծափերից ուրախանամ, գրկեմ, ժպտամ ու լացեմ, պառկեմ Աբովյանի խաչմերուկի մեջտեղում, որովհետև ամեն դեպքում ես հպարտ եմ, որ հայ եմ: Էն մարդիկ, որ ապրում են հիմա Հայաստանում, և ում ես տեսա ու ումով հպարտացա, իրենք են Հայաստանը, ոչ թե էն մարդիկ, որ փշալարի մյուս կողմում են, որ մեզ վրա, չգիտեմ ինչեր են գցում, որ տանկ ու ջրցաններ են բերում, իրենք չեն Հայաստանը, հաստատ:
Ու էս ամեն ինչի հետ դեռ կան մարդիկ, որ օնլայն տիրույթում գրում են՝ «Դուխով, առաջ գնացեք, հետ չգաք»: Էս ամեն ինչը հեշտ է, երբ

Լուսանկարը՝ Աշի Ավետիսյանի

դու տանն ես, կողքից ես նայում, ու թվում է քեզ մի քայլ է բաժանում քո նպատակից: Ես չեմ ասում՝ եկեք մեզ հետ ու տնից մի գրեք (էդ էլ է օգնում շատ), ես չեմ ասում՝ «դուխ» մի տվեք, բայց մի մեղադրեք, երբ մարդիկ հետ են գալիս ու ինչ-որ պահի ուղղակի հուսալքվում:
Էս ամեն ինչի հետ կան մարդիկ, որ կանգնում են ցուցարարների ֆոնին ու ժպտալով սելֆի անում, կամ՝ «Ապե, մի հատ ինձ նկարի, քանի չեն գնացել»: Էս ամենի հետ կան մարդիկ, ովքեր գոհ են երկրի վիճակից ու մեղադրում են մեզ մենակ նրա համար, որ իրենք ուշացան գործից-դասից: Հարցը էդ մի օրը չի, հարցն էն է, որ իրենք միշտ են էդպես, միշտ են էդպես մտածելու, ուշանան, թե՝ չէ:
Ու կարող է էս ամեն ինչը էսպես չպետք է մեկնաբանվեր, որ իմ էստեղ գրելը սխալ է, որ ես կարող է՝ շատ բան չեմ տեսել: Բայց ես գիտեմ, որ երբ փշալարից էս կողմ ես, էդ ձայնից կարող է գժվես ու ժամերով հետ չգաս, կարող է անընդհատ հարցնես՝ ինչի՞, կարող է՝ կոտրվես, կարող է «մանթոյից խնդաս», հումորներ անես, մտածես կողքինիդ մասին, երբ իրեն առաջին անգամ ես տեսնում, ու մեկ է, դրանից հետո էլի գնաս ու ասես՝ բայց մենք ժպտում ենք:
Ու չեմ լռելու նրա մասին, որ էս ամենը նման էր պատերազմի, սահմանին, իսկական: Որովհետև էդ ամենը ես հենց էդպես էլ պատկերացնում եմ, երբ տղերքը ասում են մեկը մյուսին՝ ես կմնամ, դու գնա աղջիկներին տեր եղի, երբ ասում են՝ մի վախեցիր, երբ աղջիկներին են պաշտպանում, հետո իրենց մասին մտածում (կամ մոռանում իրենց մասին), ու փշալարի մյուս կողմը էդ իրական սահմանի մյուս կողմն է, որովհետեւ երբ առաջին «չգիտեմ ինչը» գցեցին, ես չէի ուզում հավատալ, որ էդ զավակ, կին, մայր ու հայր ունեցող մեկն է անում: Էդ ուղղակի անհնար է…
Բախտի բերմամբ թե պատահմամբ, նաև մյուս կողմերում եղա, որտեղ էլի փակել էին ճամփաները, ու էդ ոստիկանները, էդքան շատ մարդ (մարդ եմ ասում, որովհետև ուզում եմ հավատալ, որ իրենք առաջին հերթին մարդ են, ամուսին, հայր, որդի, հետո ոստիկան, և ուզում եմ հավատալ, որ իրենք իրոք այլ ճար չունեն, դրա համար են էսպես վարվում), սպասում էին ուղղակի մեկի հրամանին, մեկի, գրողը տանի: Մի հոգու պատճառով էս ամեն ինչը, մի հոգու պատճառով… Չէ, իմ երազած Հայաստանը հաստատ սա չի, հաստատ:
Ու միշտ ասել եմ ու էլի ասում եմ՝ ես էս երկրից չեմ գնալու, երբեք, ես իմ երեխեքին էստեղ եմ մեծացնելու, իմ երեխեքը հայ են մեծանալու, որովհետև էս է իրենց տունը:
Ուղղակի ուզում եմ, որ էսպես չլինի: Ուզում եմ հավատալ, որ մի անգամ «Ոստիկան, միացիր»-ով բոլորը միանալու են, որ գնալու ենք ու անենք էն, ինչ ուզում է ժողովրդի մեծ մասը: Բայց չէ, պարզվում է կան նաև կինոյի վատ տղաները, որ խանգարելու են:
Ինչ եմ ուզում ասել, իմ Հայաստանում համալսարան-դպրոցում ցույցի գնալը (ֆորմալ՝ դասից բացակայելը) էդ ուսհաստատությունից հեռացվելու պատճառ չի, իմ Հայաստանում դասախոս-ուսանողը չի վախենում «մեշոկ պապիներից», իմ Հայաստանում ոստիկանը քաղաքացու պաշտպանն է, ոչ թե թշնամին, ու իմ Հայաստանում փշալարեր չկան:

Դիանա Գրիգորյան

Կորչի՛ բռնության մշակույթը

«Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է». ծանոթ արտահայտություն է, չէ՞: Այս անգամ մենք հաստատ գիտենք, թե որտեղ ու ինչն է սխալ:
Պարզվում է՝ վերջին 4-5 օրվա ընթացքում ես 51.108 քայլ եմ արել: Ես չգիտեմ, թե այդ քայլերից որն էր ավելի համառ ու հաստատուն, որն էր դանդաղ ու, գուցե, ինչ-որ պահի հուսահատ, բայց ես գիտեմ մի ուրիշ ճշմարտություն. դրանցից յուրաքանչյուրն արված էր տեղին ու ժամանակին:
Երևի հեշտ է ձևացնել, թե մեր պստլիկաշենում ոչինչ էլ չի եղել, երբ տան պատուհաններից դուրս թվացյալ խաղաղություն է, հեշտ է ձևացնել, թե մտահոգվելն ու աջակից լինելը ամենևին էլ քո գործը չէ, հեշտ է, երևի,

որովհետև պայքարի սիրուն ու թեժ ալիքը տնից մի քանի կիլոմետր այն կողմ է ու քեզ չի հասնի, եթե ինքդ չուզես…

16.04.2018
Պայքարելիս չպիտի վախենալ. բոլոր գեղեցիկ երևույթներն ու իրողությունները վախից անդին են: Առավոտյան ժամը ինն է. մենք մեր տեղում ենք, բարիկադներն էլ՝ իրենց: Նստարանին՝ «ԵՐԵՎԱՆ», գլխավերևումս՝ Մոսկովյան-Մաշտոց, ես՝ Երևանի կենտրոնում նստած նայում եմ Մայր Հայաստանին ու խմում անծանոթի հյուրասիրած սուրճը, որը միայն պայքարի լիությունից ու քաղցրությունից է այսքան համով թվում:
Ռոպեներ անց, երբ զուգահեռ փողոցում ընկերուհիս «տանում է» պապիկի ցավը ու համոզում մնալ, իսկ մյուս կողմում ես հերթական երիտասարդին բացատրում եմ, որ իմ ցավը տանելու կարիք չկա, ու ճանապարհում եմ եկած ուղով, հայտնվում է երաժշտական դպրոցի ուսուցչուհին ու փողոցով մեկ հայտարարում.
- Ես հինգ անչափահաս երեխա ունեմ, չգիտեմ՝ վաղը գործից կհանեն, թե ինչ կանեն, բայց էստեղ եմ ու չեմ պատրաստվում հեռանալ, դուք պարտավոր եք անել այն, ինչ կասեն ձեզ…
Նմանատիպ կադրեր ես կարող եմ հիշել հարյուրներով ու հազարներով, բայց լայնամասշտաբությունը ցույց տալու համար կասեմ միայն հետևյալը. երկու օր անընդմեջ փողոցը փակել ենք նաև հատուկ ցույցին մասնակցելու եկած ռուսաստանաբնակ հայերի հետ: Քեզնից՝ ինչպես որ ինձնից, մեծ ջանքեր կպահանջվեն հավատալու համար, որ սա կատակ չէ, որ սա հեղափոխության թարմ ու նոր ալիք է, որ մեքենաներից դատարկված փողոցները լի են հազարավոր մարդկանցով, բայց սա կլինի միայն մի պահ, որովհետև հաջորդ վայրկյանին լռությանը կփոխարինեն վանկարկումներն ու Նիկոլի՝ ամբոխին ուղղված խոսքերը, թե մենք առաջ են գնում բաց ձեռքերի սկզբունքով: Ու քեզ կապշեցնի, շատերին՝ կսարսափեցնի ոստիկանական զորքերի արձագանքը. դեպի ամբոխն է գալիս խլացուցիչ-պայթուցիկը (իրական անունն էդպես էլ չհիշեցի, ինչևէ), քեզ ծանոթ դեմքերը կորում են սպիտակ ծխի մեջ, ուժերդ կարծես սպառվում են, հանկարծ հայրը ամբողջ ուժով գոռում է «բալե՛ս»՝ էդ մի բառի մեջ դնելով հայրական բնազդի ողջ էությունն ու ոգին, անգիտակցաբար կամ գիտակցաբար նա իր թևերի տակ է առնում քեզ, ինձ, նրան…
- Չվախենա՛ք, չգնա՛ք:
Հետո, երբ այս ապահով հովանու տակ է հայտնվում նաև նրա դուստրը, նա ուղղակի նայում է դիմացից խուճապահար փախչողներին ու ասում.
- Ես էստեղ եմ, տեսե՛ք, էստեղ եմ՝ աղջկաս կողքին, հետ չգնա՛ք, չնահանջե՛ք…
Էկրանից այն կողմ նստած ընթերցողիս սա գուցե ֆիլմ կամ էլ բեմականացում թվա, բայց սա ստացված իրականություն է՝ սադրիչների չստացված ու անհաջող խաղի առաջ…

17.04.2018
Ըստ վիճակագրական տվյալների այսօր հանրահավաքին մասնակցել է՝ 33.000-35.000 մարդ:
Այ, Հայաստանը իրե՛նք են, ե՛ս եմ, դու՛ ես, նա՛ է, մե՛նք ենք…
Հայաստանը սեփական աչքերում հույսի արեգակները վառ պահողներս ենք:
Հայաստանը պատշգամբից մեզ նայող ու, ենթադրում եմ, հպարտությունից ու ուրախությունից լաց լինող կինն է:
Հայաստանը Մոսկվայից ու Ֆրանսիայից գրող ընկերներս են, իմ ու քո մասին մտահոգվող դասախոսներն են, ովքեր ասում են, թե իրենցից հազար գլուխ լավն ենք:
Հայաստանը իրենց քայլն անողներն են: Եվ իշխանությունը այս Հայաստանինն է, ոչ թե՝ ուժով ու բռնությամբ սեփական ներկայությունը թելադրողինը:

18.04.2018
Ինչպես նախորդ օրերին, այսօր էլ բոլոր ճանապարհները տանում են Բաղրամյան:
Եթե ասեմ, որ ամեն բան այն աստիճան խաղաղ է, որ հնգօրյա հավաքներ պատմող ու հիշեցնող ոչինչ չկա, կսխալվեմ:
Իր հետույքը աթոռին ամուր կպցրած մի աներես որոշել է, թե փշալարերը կարելի է հավաքել, ցույցը՝ ցրել, մտածել է՝ էլ չենք միավորվի: Ես տխրում եմ նրա համար:
Ֆրանսիայի հրապարակում ոստիկանական զորքերի տարափ է: Ընկերներիս խելառությունը դրսևորվել է անգամ այդ պահին. փորձել են փողոց փակել, փորձը վերածվել է բռնոցու: Հաղթողն էլի իրենք էին:
Պայքարը շարունակվում է. մեզնից դեռ շատ ուժեր կպահանջվեն:

19.04.2018
Այս ամենը ձեզ չպատմելն ուղղակի ճիշտ չէր լինի, արդար չէր լինի:
Մեր ընկերներից երկուսին բերման են ենթարկել՝ առանց հիմնավորման: Սխալ գործելաոճ է, բայց սա էլ կանցնի: Կանցնեն բոլոր սխալ ու անարդար «ճշմարտությունները», ու կմնա միայն մեկը. քո հիմիկվա քայլերը երազածդ հեռանկարին համապատասխան պիտի լինեն, լռությունդ ոչնչով չի օգնի…
Կորչի՛ բռնության մշակույթը: Մենք նրան ասում ենք՝ ո՛չ:

Սոֆի Թովմասյան

Լուսանկարը՝ Անուշ Մուրադյանի

Քաղաքացու կայացումը

Առաջին անգամն էր: Հա, առաջինն էր, երբ ես համարձակվում էի հակառակվել ծնողներիս ու տուն չգնալ, առաջինն էր, երբ հեռախոսազանգերին չէի պատասխանում ու պնդում էի, որ փողոցում եմ մնալու:
Մի շաբաթ առաջ էր կամ մի քիչ ավելի, Անին ինձ ասաց, որ ես շատ հեռու եմ քաղաքականությունից, հարցեր տվեց, ու ես զգացի, որ բացի փաստերից ուրիշ ոչինչ չգիտեմ, ոչինչ չեմ հասկանում:
Ուրբաթ էր, երբ գոնե տանից դուրս գալու ու զբոսնելու պատրվակով դրսում էի: Մի քանի ժամ հետո ստիպված էի տուն վերադառնալ: Մարդիկ հանրահավաքից, Ֆրանսիական հրապարակը փակելուց, էնտեղ քնելուց ու պայքարելուց էնպիսի դրվագներ էին պատմում, էնպիսիները, որոնք լսելիս անտարբեր անցնել հնարավոր չէր: Միայն ես իմացա, թե ինչքան ինձ մեղադրեցի ու չներեցի մի ամբողջ շաբաթ ու կիրակի տանից դուրս չգալու ու մերոնց կողքին չլինելու համար:
Կիրակի երեկոյան, երբ բոլորը վախեցած որոշում էին, որ չպիտի գնան համալսարան, ես հստակ գիտեի, թե ինչ եմ ուզում ու ինչ էի անելու: Երկուշաբթի ես պիտի մերոնց հետ լինեի:
Թե ինչ դժվարությամբ ու ինչ մտքերով հասա համալսարան, կարևոր չէ, ինչքան վախ ու անհանգստություն կար իմ մեջ, դա էլ կարևոր չէ, բայց հասա, ու դիմացիս տեսարանն ինձ այդ պահի ամենաուժեղն ու պայքարողը դարձրեց:
Ուսանողների մի մեծ խումբ գրավել էր ամենամեծ խաչմերուկներից մի քանիսը, համալսարանները դատարկ էին, ուսանողները ժամանակ չունեին դասի գնալու, ուսանողները պայքարի էին ելել:
Տեսածս ամենալուսավոր դրվագներից էր: Ես ու էս երեխեքը գիտեինք՝ ուր ենք գնում ու ինչ ենք ուզում, մեր մեջ էր ապագան, ու մեր մեջ էր եռում պայքարող արյունը:
Մի պապիկ կոնֆետ էր բաժանում, ասացի, որ չեմ ուզում, ասաց՝ ձեզ համար եմ բերել, բալես, վերցրու, ուրիշին կտաս: Վերցրի, բայց ուրիշին էլ չտվեցի, մինչև հիմա թանկարժեք մասունքի պես պայուսակումս եմ պահում:
Ամենուր խանդավառ դեմքեր էին, մարդիկ, որ անտարբերության զոհ չէին դարձել, մարդիկ, ովքեր հավատում էին, մարդիկ, ովքեր իրենք էին կերտելու ապագան, մարդիկ, ում տեսնելիս կարող էիր ժպտալ, ձեռքով ձեռքին հարվածել ու իրար հավատացնել, որ հաղթելու ենք, մարդիկ, ում հետ հանդիպել էիր պայքարելու համար, մարդիկ, ում կարող էիր ամուր-ամուր գրկել, մինչև 15 վայրկյանը կլրանար (եթե 15 վայրկյանից ավել է տևում գրկախառնությունը, ապա նշանակում է՝ մարդիկ իրար վստահում են):
Բոլորն էնքան ծանոթ ու հարազատ էին թվում: Ամեն պահ ասում էի՝ վայ «Մանանայի» Սերոժը, վայ մյուս Սերոժը, հետո էլի՝ Գևը, Սյուզին, Իրինան, Արուսը, Անին ու բոլորը, բոլորին ասես տարիներով ճանաչած լինեի:
Ուսանողների մեծ մասը սահմանի նման խաչմերուկ, կամուրջ ու փողոց էին փակել ու պահում: Լրագրության ֆակուլտետի մի ամբողջ կուրս դրսում էր: Էլի քայլում էի փողոցներով, երբ Արուսին տեսա, աչքերը փայլում էին, մի տեսակ ժպիտ ուներ, նստած էր փողոցի ամենակենտրոնում դրված նստարանին, վազեցի իր մոտ.
-Արուս, բա ասացիր՝ դրսում չես կանգնի, ցույցի չես մասնակցի:
-Ամ, էս անգամ չէի կարող, էս անգամ ուրիշ էր, էս ամենը լրիվ ուրիշ ա:
Ու հա, ուրիշ էր, մարդիկ ու իրենց համարձակությունը ուրիշ էին, նման չէին այս կամ այն օրվան ու պահին:
Բոլորն օգնում էին իրար, բոլորն իրար կողքի էին, մեկը ջուր էր բաժանում, մեկը՝ սնունդ, ուսանողների հայրերը իրենց երեխաների համար սնունդ էին բերում, մի պապիկ էլ ցուցարարներին ծաղիկ էր բաժանում, էնքան գեղեցիկ էր էս ամենը…
Ու թե ինչ էի զգում, երբ Անիին էի գրկում, երբ իր մասին տեղեկություն էի ստանում լուսանկարներից, ուղիղ եթերներից, հետո ամբողջ քաղաքով մեկ փնտրում էի իրեն գտնելու ու գրկելու համար: Իրեն տեսնելիս ու գրկելիս միջիս արևի դեղինը թարմացնում ու նորից գործի էի անցնում: Ինքը ապացուցում էր, թե ինչքան ուժեղ կարելի է լինել ու ինչքան կարելի է պայքարել, ինքը, որ փակում էր ավտոբուսների ճանապարհը՝ գետնին պառկելով, ինքը, որ օրերով դրսում էր գիշերում, պայքարի օրինակ էր ինձ համար: Այստեղ էր իմ երազած հասարակությունը:
Ու սրան հակառակ, ահռելի քննադատություն, քննադատություն և կրկին քննադատություն: Մարդիկ էկրանից այն կողմ էին հետևում դեպքերին ու առանց էդ ամենի մեջ լինելու՝ համարձակվում էին ասել, որ սխալ է, որ ոչինչ չեն փոխի, ձևական բնույթ կրելու մասին գրված մեկնաբանությունները, էլ չասեմ՝ ինչքան շատ էին: Ձևական ինչպե՞ս են պայքարում, անկեղծ, չգիտեմ:
Քայլում էինք, ու վարորդները վեճ էին սկսել, որ չենք թողնում ազատ երթևեկեն, որ անհանգստություն ենք պատճառում: Բայց հենց անցնեն բնականոն կյանքի, ասելու են «երկիրը երկիր չի»:
Ասում են՝ էս չի՞ ձեր արածը, ցույց տալով փողոցում դրված աղբամանները, ասում են, որ քանդելուց բացի ոչինչ չեք կարողանալու, ասում են ու ձեռքները ծալած նստում, ասում են՝ ուսանող եք, տաքարյուն եք, չեք հասկանում, որ չի փոխվի ոչինչ, ու իրենք չեն միանում ինչ-որ բան փոխելու համար:
Էսպես գրում եմ ու տողերս չեմ ուզում հասցնել օրվա վերջին…
Չեմ ուզում հիշել, թե բոլոր «ոստիկան, միացիր» հորդորներին, ոստիկանները ինչ պայթյուններով պատասխանեցին, թե ինչպես մարդիկ վիրավորվեցին, մարդիկ ուշաթափվեցին ու սարսափեցին:
Իմ երազած հասարակությունը փշալարի մի կողմից պայթուցիկ նետող մարդիկ չէին:
Հիմա ես, հնարավոր է, կրկին ոչինչ չեմ հասկանում քաղաքականությունից, չգիտեմ՝ ինչն է սխալ ու ճիշտ, բայց գիտեմ, որ ես միշտ պայքարելու եմ իմ երազած հասարակության ու Հայաստանի համար:

Ամալյա Հարությունյան

Լուսանկարը՝ Լիլիթ Վարդանյանի

#իմերազածհայաստանում

Լուսանկարը՝ Միլենա Խաչիկյանի

Ես հենց ուզում եմ Հայաստանի մասին խոսել անկախ ինձնից Համասյան եմ միացնում, որովհետև դրանից տխուր բան չգիտեմ: Բայց էս օրերի Հայաստանի մասին խոսելիս պետք ա միացնել «Որդան Կարմիր», «Լավ Էլի», ի վերջո Սերժ, բայց միանշանակ, Թանկյան: Էնպես որ, ընտրությունը քոնն է, որովհետև չնայած ավտորիտարիզմին, մենք «ազատ ու անկախ» Հայաստանում ենք ապրում:
Հիմա աջ ու ձախ գոյատևում ենք, բայց մի օր, երբ էլ չլինենք, (երևի) ափսոսելու ենք, որ ժամանակին չենք ապրել: Բայց ոնց ապրել մի երկրում, որտեղ 400 000 արտագաղթող կա ու ներգաղթի ոչ մի տվյալ, որտեղի արտաքին պարտքը 7 միլիարդն անցնում է, որտեղ ամեն օր զինվոր է զոհվում: Հայաստանում բանակը մի տեղ է դարձել, որտեղ տղերքին ուղարկում ենք կորցնելու վախով, բայց և հետ գալու հույսով-սպասումով: Բայց լավագույն տղերքն էլ հեռանում են, ու արդեն չգիտեմ օտար ափերում բախտ որոնելու, թե… Սիրելի կանանց մասին լռում եմ:
Զասացիր, է՝ ոնց ապրել մի վայրում, որտեղ երազանքներդ փշրվում են: Ապակու կտորների պես շրխկոցով թափվում: Ինձ էս Հայաստանում օդը չի հերիքում: Դժվար է: Իմ երազած Հայաստանում իմ երազանքները երազանք չեն մնում, կատարվում են ու նորերը ծնվում: Իմ երազած Հայաստանում ես ամեն օր վախի սինդրոմով չեմ ապրում: Իմ երազած Հայաստանում հերոսները մեր կողքին են, ոչ թե Եռաբլուրում, ու սահմանին ավելի շատ ու հզոր զինտեխնիկա ու անհրաժեշտ պարագաներ ունենք, քան մայրաքաղաք Երևանում:
Իմ երազած Հայաստանում մենք ազատ խոսքի իրավունք ունենք գործնականում, ոչ թե միայն տեսականում: Գրողը տանի, իմ երազած Հայաստանում դպրոցում սովորեցնում են իրավունքների համար պայքարել, ոչ թե լռել ու անցնել, սովորեցնում են հայրենիք սիրել ու գնահատել, ոչ թե պաթոսախեղդ արտահայտություններ անգիր անել:
Իմ երազած Հայաստանում դասախոսը համալսարանում ինձ չի ասում, որ ես ոչինչ չեմ անում իմ երկրի համար, օգնում է, որ անեմ, համալսարանի ռեկտորը խելացի երիտասարդ է: Իմ երազած Հայաստանում համալսարաններում բոլորը մտավորական ու գիտակից մարդիկ են, ու ի վերջո, համալսարաններն էնքան լավն են, որ ես կարիք չունեմ արտերկրում ուսում ստանալու:
Իմ երազած Հայաստանում աղջիկներն ու տղաները նույն իրավունքներն ունեն: Իմ երազած Հայաստանում ես կարող եմ անել այն, ինչ ուզում եմ, ոչ թե այն, ինչ ուզում են: Իմ երազած Հայաստանում երիտհանրապետականը իրեն ու ինձ չի խաբում, որ ամեն ինչ ընտիր է լինելու, որ էլի բարեկեցիկ, հզոր ու կայուն երկիր ենք ունենալու, էլի, հա, էլի՞, էն որ երբեք չենք ունեցե՞լ:
Իմ երազած Հայաստանում ինչ-որ լուրջ ծյածյաներ չեն որոշում, թե ես ինչ երկրում ապրեմ, ես եմ որոշում, ես: Իմ երազած Հայաստանում, երբ ողջ ժողովուրդը հեռանալ ա պահանջում, ինչ-որ մեկը Բաղրամյան 26-ում հանգիստ չի նստում ու ասում՝ քիչ եք: Իմ երազած Հայաստանում պաշտպանության նախարարը չի ասում՝ բոշան դու ես: Իմ երազած Հայաստանում ոչ ոք ոչ ոքի չի վառում, սիրելիներս:
Իմ երազած Հայաստանում քաղբանտարկյալները ազատ են: Չէ, չէ, կներեք, իմ երազած Հայաստանում քաղբանտարկյալներ չկան, որ մի հատ էլ՝ ազատ լինեն: Իմ երազած Հայաստանում ոստիկանները հղիի փոր ու հավի կերած ուղեղ չունեն:
Իմ երազած Հայաստանում վարչապետ ընտրելու օրը մարզերում լույսերը չեն տանում: Իմ երազած Հայաստանում տրանսպորտը շահագործումից չեն հանում, որ չկարողանանք ցույցերի հասնել: Իմ երազած Հայաստանում դպրոցներում երեխաներին չեն փակում: Իմ երազած Հայաստանում հեռուստատեսությամբ ցույց են տալիս իրականությունը, ոչ թե այն, ինչ իրենց է պետք:
Իմ երազած Հայաստանում լրագրողներին իրենց աշխատանքը կատարելիս չեն հրում: Իմ երազած Հայաստանում ոչ ոք իր Mercedes-Benz G-դասից չի իջնում ու հարվածում երիտասարդներին: Իմ երազած Հայաստանում ոստիկանը ձեռքի մահակով խաղաղ ցուցարարի չի խփում, խաղաղ ժողովրդի վրա պայթուցիկներ չի նետում:
Իմ երազած Հայաստանում մարդիկ չեն ասում՝ «Բան էլ չի փոխվելու, ոչ մի բան էլ չի լինի, մեկ ա, մեր տեղը արդեն սաղ որոշած ա, էդ ջահելներն ինչ են անում յանի, անիմաստ հելե ընկել են փողոցները»: Կներեք, բայց իմ երազած Հայաստանում սենց ոչ գիտակից մարդիկ առհասարակ չկան:
Իմ երազած Հայաստանում նախկին նախագահին, ներկայիս վարչապետին չեն մերժում, ինքը սուս-փուս քայլ է անում, թողնում-գնում Ուգանդա: Տենց մի նայիր. Ուգանդա, որովհետև ինչքան հեռու, էդքան լավ:
Իմ երազած Հայաստանում…
Ու ամենավերջում, իմ երազած Հայաստանում ոչ ոք չի օգտագործում #իմերազածհայաստանում արտահայտությունը, որովհետև սա հենց մեր երազանքի Հայաստանն է:

Լիդա Արմենակյան

Լուսանկարը՝ Սոսե Զաքարյանի

Եկեք ձեզ պատմեմ իմ պատմությունը

Ապրիլի 17-ն էր, երբ ավագ դպրոցի աշակերտներով ընդհանուր չաթ բացեցինք և սկսեցինք քննարկել տեղի ունցող իրադարձությունները: Որոշում կայացվեց. պետք է պայքարենք, և դրա առաջին քայլը քաղաքումս ցույց կազմակերպելն էր: Սովորականի պես եկա դպրոց՝ ուսապարկը մեջքիս՝ կասկած չհարուցելու համար: Դպրոցի բակը աղմկոտ էր, ոստիկաններ դեռ չկային: Դե, տրամաբանական է, ով կմտածեր՝ ախր, մենք ընդամենը երեխաներ ենք, ընդամենը երեխաներ:
Ապա երթը սկսվեց: Մենք բոլորս գոռում էինք հայտնի կարգախոսները՝ «Սերժի՛կ, հեռացիր, քայլ արա, մերժի՛ր Սերժին»:
Մի պահ անգամ զգում էինք՝ պահանջատեր քաղաքացի արտահայտության իսկական իմաստը, բայց (տատս ինձ միշտ ասում էր. «Բայց-ից առաջ ընկած նախադասությունը իր արժեքը կորցնում է», եսի՞մ, երևի ճիշտ էր ասում):
Ապա մեզ միացավ քաղաքի քաղաքապետը (ինչի չեմ նշում քաղաքը, վերջում կգրեմ)՝ փորձելով հոգեբանական ազդեցություն ունենալ մեզ վրա, սակայն չհաջողվեց՝ մեր ոգին անկոտրում էր: Հաջորդ քայլը նստացույց անելն էր հրապարակում՝ Մշակույթի տան աստիճաններին: Հա, մոռացա ասել՝ այս ողջ ժամանակահատվածում մեզ արդեն «ուղեկցում էին» ոստիկանները, որ հանկարծ ոտքներս քարին չտանք: Դե, եկեք անտեսենք այն հանգամանքը, որ ցույցի մասնակիցներին համեմատում էին հայտնի կենդանիների հետ, իսկ ով դեմ էր ելնում իրենց ասածներին՝ ենթարկվում էր ֆիզիկական բռնության: Այո, ցավ է:
Գիտեք, վերը նշածիցս ավելի ողբերգական բան կա: Մենք քայլում էինք խանութների շրջակայքով, գոռում՝ «Միացեք մեզ», և որպես պատասխան ստանում՝ «Էդ ձեր դասերը սովորե՞լ եք, որ մի հատ էլ ձեր արևին ցույց եք անում»:
Ախպեր, եթե դու 10 000-ով քեզ ծախում ես, մենք տենց չենք, մենք ուզում ենք էդ քո օրական 28 դրամը վերանա, ուզում ենք, որ հենց դու, քո երեխաները ու թոռները ապրեն ավելի լավ հասարակությունում, բա չէ՝ «դասերներդ սովորել ե՞ք»: Գիտե՞ք, 9 տարի գերազանցիկ եմ եղել, ի դեպ: Դպրոցը կերտում է քաղաքացի: Հա-հա-հա… Քո ծիծաղն էլ եկավ, չէ՞: Քաղաքս ու դպրոցի անունը անվտանգության տեսանկյունից ելնելով չեմ նշում, խնդրում եմ, հասկացեք, մենք դեռ այդքան ժողովրդավար երկիր, հասարակություն չունենք, հիշեք էլի՝ դպրոց: Դպրոցը ընդամենը վախենում է աշխատատեղեր կորցնելուց: Ցավալի է:
Մենք բոլորս պոտենցիալ արտագաղթողներ ենք, բայց մենք չե՛նք ուզում դա անել, մենք ուզում ենք տեսնել լա՛վ Հայաստան, ուզում ենք տեսնել օրինական ընտրություններ, չենք ուզում տեսնել ազատությունը սահմանափակող դպրոցներ, որոնք մեզ մի բանում են օգնում՝ դառնալ քառակուսի մտածելակերպ ունեցող անձինք, անհատներ, երևի թե՝ ապագա քաղաքացիներ:
Մենք շարունակում ենք քայլել: Քայլ՝ քայլի վրա, բառ՝ բառից հետո, կոչեր՝ մեկը մյուսից հետո (թե՞ առաջ, չեմ էլ հիշում):

Գարիկ Խաչատրյան

Ուսանողը խաղաքար չէ

2018թ.-ի ապրիլի 16-ն էր՝ աշխատանքային շաբաթվա առաջին օրը: Պատմության դասախոսը մտավ լսարան: Ուսանողները, ովքեր ուղիղ եթերով հետևում էին քաղաքում տիրող իրավիճակին, անջատեցին հեռախոսները: Բոլորը պատրաստ էին լսելու Հայաստանի առաջին հանրապետությանը վերաբերող դասը: Բայց դասախոսը եկել էր արտահայտելու իր մտքերը՝ կապված անցկացվող ցույցերի հետ: Նա եկել էր հավաստելու, որ դա ապարդյուն է, որ պատմությունը ցույց է տալիս՝ նման դեպքերի հանգուցալուծումն ինչպիսին է լինում, որ պետք է հիշել փաստերը, ունենալ հստակ ծրագիր՝ հեղափոխության հասնելու համար: Կարճ ասած, պետք չէ միանալ ցույցին: Իսկ մինչ դասի սկսվելը ուսանողների հեռախոսները թնդում էին հակառակ ուժերի հնչեցրած պայքարի խոսքերով:
Պատահական չէ, որ կոչերն ու հորդորները առաջին հերթին հենց ուսանողությանն է ուղղվում. թվում է՝ ղեկավարները կարող են օգտագործել վերջիններիս, ինչպես շախմատի տախտակին հակառակորդի դեմ զինվոր ուղարկելիս, կարող են «շտկել» մեր մտածելակերպն ու կարծրատիպերը, մի խոսքով, ոտքի կանգնեցնել կամ հանգստացնել նրանց:
Դասախոսին ուսանողները ուշադիր էին լսում, բայց հաջորդ օրը ողջ կուրսը դասադուլ հայտարարեց, և շատերը դուրս եկան փողոց: Մի՞թե գաղտնիք է մնացել, որ ուսանողն այսօր ավելի կայացած է ու խելացի: Առանց որևէ մեկի օգնության նա կարող է հասկանալ՝ ինչ է կատարվում իր շուրջը, կարող է տեսնել, նկատել

ու ճիշտ եզրահանգում անել՝ քաջ գիտակցելով ինչու է դուրս գալիս փողոց, բացակայում դասերից ու ընկերների հետ ձեռք ձեռքի բռնած դադարեցնում երթևեկությունը:

Միլենա Մովսեսյան

Նայելով ազատության աչքերին

Չգիտեմ՝ որտեղից է պետք սկսել պատմել, բայց ամեն դեպքում պետք է, որովհետև հիմա դա միակն է, որ ես կարող եմ անել՝ էսպես տանը փակված, ընկերներիս հետ միասին մտքով կռիվ տալու ու էսօր նրանց կողքին չլինելուս համար լաց լինելու փոխարեն: Ես քաղաքացիական ակտիվություն երբեք չեմ ունեցել, բայց էս պահից սկսած էլ չեմ կարող նույնն ասել, չեմ կարող, որովհետև երեկ ու դրա նախորդ օրը ես դուրս եկա փողոց՝ հաղթահարելով իմ մեջ հազար վախ ու սկզբունք, դուրս եկա, որովհետև ընկերներս էին էնտեղ, ու ես չգիտեի՝ ոնց էի վաղը նայելու նրանց աչքերին:
Դրա համար էլ հիմա, անկախ մեզ կոտրելու բոլոր փորձերից, ես ասում եմ էլի իմ ընկերներին, որ իրենք հաղթել են՝ նախևառաջ ինձ «հեղափոխելով», ու ես ամենից շատ իրենց ու մեր բոլորի ներսում ապրող էդ հաղթողին եմ սիրում:
Երկու օր առաջ Ֆրանսիայի հրապարակում մարդիկ էնքան ջերմ էին, ու երեկոն էնքան էր խաղաղ, որ ոչ մեկս չէր մտածում պայթուցիկների, ջրցանների ու զրահապատ մեքենաների մասին կամ էլ գուցե չէր ուզում մտածել… Էդպես խաղաղ էլ սկսվել էր ամեն ինչ: Բայց երեկ, ամեն տեսակ զենքի ու կռվի արանքում, քաղաքացիական հագուստով ոստիկանների ու իրենց նմանների բազմանդամ շարասյուների մեջտեղում, շատ բաներ փոխվեցին: Մեր կողքին, մեր աչքի առաջ, մեր մեջ: Բայց մարդիկ էլի մնացին նույնը՝ իրար հաց բաժանող, մեկը մյուսին ջուր հասցնող, ծանոթ-անծանոթի համար լաց լինող… Իսկ կյանքը սովորաբար արցունքի միջից լրիվ այլ է երևում:
Երեկ առավոտյան, երբ մետրոյով մի կերպ հասա Երիտասարդական, առաջին անգամ հասկացա էդ կայարանի անվանման արժեքը, որովհետև դուրս գալով քաղաք՝ էդ նույն երիտասարդությունը ինքն իրենով փակեց միանգամից չորս խաչմերուկ՝ վտանգելով իրեն, կողքինին, բայց գիտակցությամբ, որ իր պայքարն ազնիվ է, ու Հայաստանը նախևառաջ հենց ինքն է:
Հայաստանը ծնողներից գաղտնի ցույցի դուրս եկած Մոնիկան է, Հասիկը, Նանեն, նրանց տագնապած հայացքներն ու իմ ուժեղ ձեռքսեղմումներին դիմանալն է:
Հայաստանը գետնին նստող ուսանողներս ենք՝ ուժասպառ քայլելուց, արևից, քաղցից:
Հայաստանը էդ պահերին մեզ ուտելիք առաջարկող մարդիկ են, ու «ապրեք, երեխե՛ք ջան» կանչող ծերերը:
Հայաստանը այ էդ ծերերն են, որ առողջական խնդիրներով ու ձեռնափայտով գալիս են՝ տեր կանգնելու իրենց իրավունքին:
Հայաստանը Հայարփիի ազնիվ գաղափարներն են:
Հայաստանը «Քաղաքացու երգ»-ը, «Քայլ արա», «Մենք ժպտում ենք» երգերն են ու դրանք անգիր իմացող մարդիկ:
Հայաստանը ցույցի դուրս եկած դասախոսներն են, ցույցի հետ քայլող մանկահասակ երեխաներն ու շները:
Հայաստանը Բաղրամյանի թեժ պահերին աղջիկների համար ճանապարհ բացող երիտասարդներն են:
Հայաստանը Ռուբենի, Միերի, Կարենի, Դավիթի պես երիտասարդներն են:
Հայաստանը կողքիցս չհեռացող Մարիամն է, որ վազքի մեջ էլի անունս էր կանչում:
Հայաստանը Աստղն ու իր քույրն են, որ պայթյունից հետո էլ որոշում են մինչև վերջին մարդը չլքել Բաղրամյանը:
Հայաստանը էդ ընթացքում իրար հերթ չտալով ինձ զանգող մարդիկ են:
Հայաստանը Անահիտն է, որ Սարյանի այգում թաց աչքերով գրկում ու հանգստացնում է ինձ:
Հայաստանը Դիանն ու իր ընկերներն են՝ ուժեղ ու կարեկցող:
Հայաստանը իմ կուրսն է՝ միասնական բոլոր բոլորից:
Իրար առանց ճանաչելու սիրող ու առանց առիթ ժպտացող մարդիկ են՝ ազատության, պայքարի ու հաղթանակի ոգով:
Էն ազատության, որի աչքերին պետք է համարձակ նայել, և որին պետք է պարզապես մինչև վերջ հավատալ ժպիտով:

Միլենա Խաչիկյան

Լուսանկարը՝ Սերյոժա Բաբոյանի

Լուսանկարը՝ Արտյոմ Մամյանի

Թեման մեկն է

Թեման մեկն է՝ Նիկոլ Փաշինյան և ընդհանրապես չվիատված նորանշանակ վարչապետ: Վերջին օրերին բոլորի ուշադրությունը գրաված, ամբողջ Հայաստանը իրար խառնած, առանց բացառությունների բոլորին տարակուսանքի մեջ գցած նոր քաղաքական իրավիճակի ելքը մեկն է՝ մեկ քայլ, մեկ հաղթանակ: Ելք գտնել բոլորն են ուզում, բայց ոչ բոլորին են թույլ տալիս քայլ անել: Մեծերի կարծիքով, եթե բոլորը համախմբվեն, արդյունքի կհասնեն, բայց հենց մեծերը թույլ չեն տալիս երիտասարդությանը քայլ անել՝ գուցե ավելի ճիշտ ու հստակ, քան իրենց արած քայլերը: Արգելվում են բոլոր տեսակի դասադուլները, թույլ չեն տալիս գնալ և մասնակցել ցույցերին: Ինչպես են պատկերացնում հաղթանակը, եթե իրենք թույլ չեն տալիս միջոցներից օգտվել: Եվ մի կողմից էլ՝ մեղադրելու չէ: Գյուղացիների մեծ մասը կազմում են պետական աշխատողները, ովքեր վախենում են կորցնել իրենց ապրուստի միակ միջոցը: Մյուս կողմից՝ հավատում են, որ եթե անգամ ցույցի մասնակցելուց հետո կորցնեն աշխատանքը, ապա կսփոփեն իրենց, որ ինչ արել են՝ իրենց զավակների ապագայի համար են արել: Բայց չկա ոչ մի երաշխիք. արդյո՞ք ցույցից հետո լավ կլինի, թե ոչ:

Ինչևէ, սրանք հռետորական հարցեր են, որոնց համար, եթե պատասխան գտնենք, ապա պատասխաններն էլ հռետորական կլինեն: Արդեն մեկ շաբաթ է, գյուղի ուսանողները չեն կարողանում դասի գնալ, փակ է գյուղից մայրուղի տանող ճանապարհը, և ովքեր էլ որ գնացել են, չեն կարողանում վերադառնալ գյուղ: Ստիպված գյուղացին նստում է տանը, իսկ ովքեր մնացել են քաղաքում, ակտիվորեն մասնակցում են ցույցերին:

Այսօր Հրազդանը ևս անում էր իր քայլը, և գյուղի երիտասարդները միանշանակ պատվախնդրորեն էին մոտեցել հարցին ու գնում էին ցույցի: Մեծահասակներն էլ պետք է նրանց միանային երեկոյան՝ աշխատանքից վերադառնալուց հետո: Բոլորը մի կերպ տեղավորվել էին մեքենաների մեջ և ուղևորվում էին Հրազդան, երբ նրանց ճամփան խոչընդոտեցին գյուղապետը և մի շարք ոստիկաններ: Ինչ կարող էին անել, ստիպված պետք է լեզու գտնեին պետական մարմիններին ենթակա անձանց հետ: Իրավիճանը լարված էր, բոլոր երիտասարդ տղաները զրույցի էին բռնվել ոստիկանների հետ, շատերը իրենց ֆեյսբուքյան էջերում ուղիղ եթեր էին միացրել, ու ողջ գյուղը, թեկուզ և օնլայն, տեղյակ էր տիրող իրավիճակից: Իհարկե դեռ պարզ չէ՝ վաղը կկարողանան նրանք գնալ ցույցի, թե՝ ոչ, բայց այսօր ցույցը կազմակերպվեց գյուղում: Տղամարդիկ փակել էին գյուղից Հրազդան տանող ճանապարհը, կայանել էին մեքենաները ճանապարհի կենտրոնում, խափանել երթևեկությունը, տրանսպորտի աշխատանքը և ցույց էին անում: Ոստիկանների մի մասը մնացել էր գյուղում, մյուս մասը մի կերպ դուրս էր պրծել գյուղից ու ընկել Հրազդանի ցույցի մեջ: Ցույցեր էին կազմակերպվել նաև Չարենցավանում: Ցուցարարների թիվը կտրուկ ավելացավ դասերից հետո, չնայած որ ողջ դասերի ընթացքում աշակերտների զրույցի թեման տիրող անորոշ իրավիճակն էր: Եզրահանգումը մեկն է. կողմ, թե դեմ, բոլորն են թելից կախված, իսկ թե ինչ կլինի հետո՝ ցույց կտան քայլերը: Մի խոսքով, Սոլակը ևս արեց իր առաջին քայլը, և վաղը առավոտյան ժամը տասնմեկից կազմակերպվում է նոր ցույց, որին մասնակցելու են նոր ցուցարարներ, և արվելու են նոր ու հուսադրող քայլեր:

Լաուրա Սեկոյան

«Սովետի» ժառանգությունը

-Էլիզ, բարև, ո՞նց ես:
-Բարև, լավ չեմ:
-Հա, մի գնա էսօր էլ: Որ մի օր էլ չգնաս՝ ի՞նչ պիտի լինի:
-Չեմ կարա…
-Էլիզ, ինչի՞ ես աշխատում:
-Էն դարում ու էն երկրում ենք ապրում, Թին… Զուտ գումարի համար չեմ աշխատում, այլ հիմա պատրաստվում եմ մեծ կյանք մտնելուն: Ոչ թե գնում եմ բանվորություն անում, այլ մասնագիտացված եմ աշխատում: Հետագան տեսնելով ու արդեն իսկ զգալով: Որովհետև ստիպում ա երկիրը: Երբ ծնողիդ աշխատավարձը կազմում ա 50.000, իսկ կոմունալները լրիվ իրար հետ՝ 100.000: Ստիպված ես օգնել, եթե ուզում ես բարեկեցիկ ապրել: Երբ տեսնում ես, որ ծնողդ ամեն ինչ անում ա քո լավ ու ապահովված ապագայի համար, իսկ երկիրը՝ չէ:
Մենք ձեր նման չենք, հարգելի «մեծ» սերունդ: Դուք, ձեզ մեզնից ավելի խելացի, բանիմաց ու փորձառու համարողներդ, ինչպիսի՞ կյանք եք տեսել: Դուք ուղղակի միանգամից՝ պետականորեն ունեցել եք ձեր աշխատանքը ու մինիմալ աշխատավարձով «յոլա» եք գնացել: Իմացել եք, որ վաղվա օրվա վրա հույս դնել կարող եք: Իսկ ի՞նչ ունենք մենք: Ոչի՛նչ, բացի անորոշությունից: Մենք ծնված օրից ենք ստիպված եղել սովորել պայքարի մեջ մտնել: Դուք փորձում եք սահմանափակել մեզ ամեն կերպ: Ինչ հագնելուց մինչև ինչ խոսել: Դուք փակում եք մեր բերանները:
Մեր սերնդին թույլ չեք տալիս ասել էն, ինչ մտածում ենք, հատկապես վերջին իրադարձությունների վերաբերյալ: Փորձում եք զրկել ազատ խոսելու իրավունքից՝ «անչափահաս» ու «տաքարյուն» պիտակավորումը տալով:
Մեր սերնդին «փչացած» եք անվանում: Մի անգամ մի տեղ կարդացի մոտավոր սենց մի բան. «Էնքան մեր սերնդին փչացած ասացին՝ փչացանք»: Չէ՛, ասում եմ, սու՛տ է: Հենց մենք ենք իսկական սերունդը: Մենք, որ «սովետ» չենք տեսել, «սովետի» սերունդ չենք ու չենք հանդուրժում ստրուկի կյանքով ապրելը: Մենք, որ պայքարում ենք, մենք, որ երբեք չենք կռանում ու գլուխներս չենք կախում, այլ բարձր պահած առաջ ենք նայում: Մենք, որ չենք հանձնվում:
Էս խառը իրավիճակների մասին, հատկապես դուք, մեծեր, ասում եք, որ անիմաստ է, ոչնչի չենք հասնի, անիմաստ իրենց են կոտորում ցուցարարները: Բայց մենք հանձնվելու մտադրություն չունենք: Երեկ ընկերներիցս մեկի հետ էի խոսում: Ասացի, որ քաղաքիս բնակիչները, մեծամասամբ դպրոցիս աշակերտները, ցույցի են գնում: Ասացի, որ հնարավորություն չունեմ ես էլ մասնակցելու:
-Հաս, մի մեղադրի էլի ինձ:
-Քե՞զ: Չէ, Թին: Ինչ կարողացել ես՝ արել ես: Մի՛ նեղվի:
Ընտրությունների նախօրեն էր՝ երկու դասընկերներիս հետ որոշեցի «#մերժիրսերժին» գրությամբ սթիքերներ փակցնել Եղվարդի տարբեր մասերում: Գիտեի, որ դրանով ոչ մի օգուտ չի լինելու, բայց շարունակում էի:
-Ո՞վ ա ասել, որ սենց բան անեք:
-Ոչ մեկ: Մոռանում եք, որ մենք անկախության սերունդ ենք: Մեզ ոչ մեկի հրամանը կամ կարգադրությունը պետք չի որևէ բան անելու համար: Ինքներս ենք որոշել անել ու անում ենք:
Հաջորդ օրը բոլորդ դպրոցում մեզ ասում էիք, որ մենք փոքր ենք, անչափահաս ենք: Մենք ի՞նչ կարող ենք հասկանալ էս ամենից: Մեզ պարզապես պատճառ է պետք՝ դասերին նորմալ չնստելու: Չէ՛, ասում եմ, հենց մենք ենք հասկանում էս ամենից: Ես, Էլիզան, Անուշիկը ու էլի լիքը-լիքը մարդիկ՝ անչափահաս, ովքեր գրեթե ծնողի, կամ ծնողների երեսը չեն տեսնում: Ում ծնողները օր ու գիշեր աշխատում են ու արդյունքի չեն հասնում: Էն ժամանակը, որ պիտի մե՛ր, իրենց անչափահաս երեխաների վրա ծախսվեր, ծախսվում է օտարության մեջ, երբեմն լրիվ մեն-մենակ, գումար աշխատելու վրա: Դուք, էդպես խոսողներդ, գուցե խնդիրներ չունեք: Ձեր երեխաները կամ թոռները ծնողական ջերմության պակաս չունեն գուցե, դրա համար հեշտ եք խոսում… Բա որ անչափահաս ենք, բա որ ոչինչ չենք հասկանում, ինչի՞ ենք ընտանիքի կարոտը սրտներումս ապրում:
Ծանոթներիցս մեկն էր, Էլիզային ասաց.
-Էդ էն դպրոցն ա, որ շաբաթը 5 օր 7 ժամով գալի՞ս ես:
Դե արի ու բացատրի, որ, այ խելոք, էս մարդը մեղավո՞ր է, որ ոչ նախագահի (արդեն վարչապետի) եղբոր երեխան է, ոչ էլ հարուստ ընտանիքից է ու ստիպված է դասերի հաշվին աշխատել, ընտանիքին օգնել: Հա՛, 16 տարեկանում: Ստիպվա՛ծ է:

Թինա Մաքոյան

Լուսանկարը՝ Լիլիթ Վարդանյանի

Լուսանկարը՝ Լիանա Թուրյանի

Ոստիկա՛ն, կտա՞ս քո սաղավարտը զինվորին

Անբարոյական քաղաքականությո՛ւն, էնպես լավ մուսա ես գրելուս համար: Կան ներկայացումներ, որ նայելուց հետո ափսոսում ես գումարդ, որ տվել ես տոմսին ու ժամանակդ, որ ծախսել ես: Այ, այդպիսի ներկայացում էր Ազգային Ժողովի նիստը: Թատրոնում իմ ամենասիրելի մասը դերասանների խոնարհվելու պահին ծափահարելն է, էդ էլ չեղավ նիստը նայելուց հետո: Նրանք խոնարհվել չգիտեն, ես էլ իրենց համար ձեռքերս իրար զարկել չգիտեմ: Անհաջող ներկայացումները խայտառակում են թատրոնը:
Ազգային Ժողով, քեզ լավ զգա, քեզ համեմատում եմ թատրոնի հետ: «Իմաստուն զինվորը» առակում կաղ ոտքով զինվորին ասում են՝ ինչո՞ւ ես գնում կռիվ, չես կարող փախչել, նա էլ պատասխանում է. «Ո՜վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու»:
Էս առակը սովորել ենք: Մեզ համար մենք կարևոր ենք: Մենք կանք, մենք մեր պայքարով հեգնում ենք բոլոր չհավատացողներին ու «անիմաստ է» ասողներին, դասադուլ անելիս ավելի շատ բան ենք սովորում, աչքերը բաց ենք անում, գտնված երազները տալիս ենք երեխաներին, արարում ենք, զզվելի իրականությունը փոխում: Ամենակարևորը՝ բարին ենք, ով հաղթում է չարին: Ներքին թշնամի չունենք, բոլորս հայ ենք, ուղղակի դավաճան հայ լինելը ավելի վատ է, ստորություն է, սատանայի ծնունդ լինել է, կաշառակեր ու մեղավոր լինել է:
Մարդիկս, բոլորս էլ տանը նստելու աթոռ կամ բազմոց ունենք: Մի՛ նստեք ու հետևեք ուղիղ եթերին, վեր կացեք, եկեք մեզ միացեք: Լավ երկիր չունենք, բայց լավ հայրենիք ունենք, տարբերություն կա: Եկեք հանուն մեր լավ հայրենիքի, հանուն մեր Եռաբլուրում անմահացած տղաների: Թող ոչ մի մարդ տանը չմնա, որ լուսաբանելու կարիք չլինի: Լրագրողներին ու օպերատորներին էլ թույլ տվեք գործադուլ անեն, ձեր պատճառով իրենք աշխատում են, ձեր տեղյակ լինելու համար աշխատում են, եկեք ինքներդ տեղյակ եղեք, իրենք էլ գործադուլին միանան:
Մենք արդեն հաղթել ենք. մեքենաների ազդանշաններով, մերժելու մասին կոչերով, փողոցներում օրեր անցկացնելով, Հանրապետության հրապարակը գրավելով ու էնտեղից մեզ համախմբողների ելույթների համար ծափահարելով ու բղավելով: Թմբուկների ձայնը հասնում է աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայերին:
Ոստիկանին Սփյուռքը ոչ մի գումար էլ չպիտի տա, մարդ լինելու ու մարդկանց կողմն անցնելու համար մեր օրերում վարձատրո՞ւմ են: Չէ՛: Էդ գումարը շա՜տ ավելի կարևոր տեղեր ունի հասնելու:
Իմ եղբայրը ծառայում է Արցախում ու սահմանը արտաքին թշնամուց պահելու համար չունի էն սաղավարտներից, որոնք ունեն ոստիկանները մեզնից պաշտպանվելու համար:
-Ոստիկա՛ն, կտա՞ս քո պաշտպանիչ սաղավարտը զինվորին:

Միլենա Բարսեղյան

Ժողովուրդը քայլ է անում

Երևանում մենք մեր կյանքը փորձում ենք մեր ձեռքը վերցնել արդեն: Ես ա՛յն սերունդն եմ, որը ոչ մի մասնակցություն չի ունեցել ընտրություններին, և իմ լուման չեմ ունեցել կառավարության ձևավորման գործընթացում ՝ հպարտ եմ դրանով: Չէ, քաղաքական անտարբերություն չեմ ցուցաբերել, շատերի նման մի ողջ երկրի ճակատագիր 5-10000 դրամով մի գիշերում չեմ վաճառել, ես ընտրության տարիքում չէի:
Ես ա՛յն սերունդն եմ, որը ժառանգություն է ստացել այս իշխանությունները:
Ես ա՛յն սերունդն եմ, որը մեծացել է այն մթնոլորտում, որտեղ մարդիկ միշտ ունեն ֆինանսական լուրջ խնդիրներ:
Ես ա՛յն սերունդն եմ, որը միշտ զարմացել է, թե ինչո՞ւ են մեծերը այսքան հոգնած ու միշտ բողոքում:
Ես ա՛յն սերունդն եմ, որ տեսել է, թե ինչքան դրամաշնորհներ են մտնում երկիր ու գնում անհայտ ուղղությամբ:
Ես ա՛յն սերունդն եմ, որին ավելի մեծ սերունդը փորձում է համոզել, որ Հայաստանը կործանված երկիր է, այստեղ մարդը չունի արժեք, այստեղ ամեն ինչ բաժանված է մի քանի հոգու միջև, և իմ Երկիրը իմը չէ ու չի էլ եղել երբևէ:
Ես ա՛յն սերունդն եմ, որ տեսնում եմ անտարբերությամբ լցված մարդիկ իրենց ավելի խելացի և խելամիտ համարելով, փորձում են քեզ զգացնել տալ, որ «Բալա, ուղեղդ ջուր է, գնա դու քու դասերով զբաղվի»:
Բայց ես ա՛յն սերունդն եմ, որ երբեք չեմ համակերպվի այս և բազմաթիվ այլ խնդիրների հետ, ինչպես անում են մեծերը:
Ես ա՛յն սերունդն եմ, որի կյանքը իր ձեռքերում է, ես ա՛յն սերունդն եմ, որը երբեք չի համակերպվի այն ամենի հետ, ինչի հետ համակերպվել եք դուք և ինձ էլ ստիպել մեծանալ այդ կործանման տանող ձեր գործողություններով:
Այսօր մենք ոտքի ենք ելել՝ մեր ձայնը լսելի դարձնելով նույնիսկ Սփյուռքում, բայց Հայաստանի գյուղերից շատերում մեր ձայնը բախվում է մարդկանց թերահավատության և անտարբերության հետ և կարծես անգամ չի լսվում:
Ես Ամասիայում եմ, և աշխատանքի բերմամբ ֆիզիկապես լքելով «Թավշյա հեղափոխությունը», եկա այստեղ, ապագայիս հեռանկարները չլքելով:
Ու..
-Հանկարծ չերթաք չխառնվիք, թող իրար ուտեն:
-Տո ի՞նչ բդի փոխեն է, էս երկիրը մեռած երկիր է:
-Ի՞նչ են ելե կպառկին ավտոների դեմը, անդաստիարակները, թող քշեն վրեքը, որ իմանան:
-Հայ աղջիկն է՞լ իրան սպես պահե, ամոթ է:
Ու գիտեք, ամենացավոտը որն է, որ այս և բազմաթիվ այլ կարծիքներ հնչում են ոչ այն պատճառով, որ խոսողները ՀՀԿ-ական են, այսինքն՝ կառավարության գլխավոր կուսակցության հետևորդներ:
Ո՛չ: Այս ամենը հետևանք է անտեղյակության, քաղաքացիական ցածր ինքնագիտակցության, անտարբերության: Այս ամենը ցուցաբերվում է այն մարդկանց կողմից, ովքեր ավերեցին էս երկիրը իրենց ծախած ձայնով ու տվեցին մեր սերնդի ձեռքը: Այն մարդկանց կողմից, ովքեր բողոքել են միշտ, կշարունակեն բողոքել, բայց միայն բողոքել՝ առանց որևէ քայլի՝ ինչ-որ բան փոխելու ցանկությամբ:
Իսկ երբ դու, գիտակցելով ու հասկանալով, որ այն, ինչ կատարվում է այստեղ, իրականում քո սերնդին սազական չէ, գալիս ես որոշակի գործողություններով, որոնք կնպաստեն քաղաքացիական և իրավական ինքնագիտակցության բարձրացմանը և մարդկանց կհասկացնեն, որ պայքարը ճիշտ է, իսկ փախուստն ու համակերպումը՝ ո՛չ, կլսես այն կարծիքը, որ…
-Դա մեր երիտասարդներին հետաքրքիր չի, ավելի լավ կլինի՝ ինչ-որ ֆինանսական ծրագիր բեր:
Բայց ես չեմ համակերպվում: Ժամանակաշրջան, երբ այստեղ բոլորը գիտեն իրենց այս իրավունքները, բայց միայն գիտեն ու աշխատում են 10 ժամ, նվազագույն աշխատավարձ անգամ չստանալով, ընտրական իրավունքը օգտագործելով որպես եկամտի միջոց: Եվ այո՛, ես հասկանում եմ, թե ինչու ենք մենք հիմա պայքարում, և ովքեր են կերտել այս իրավիճակը: Եվ երբ ինձ ստիպում են հասկանալ, որ սա կործանված երկիր է: Բա գիտի՞, թե ինչու է կործանված երկիր, որովհետև կործանողն ինքն ու իր նմաններն են եղել, թեկուզ անգիտակցաբար: Անգամ չի ասում, թե ինչպես վարվեմ, թեկուզ այս իրավիճակում երիտասարդը ի՞նչ անի: Բայց ասում է՝ չպայքարես:
Լավ: Մեծ սերո՛ւնդ, դու՛, որ քննադատում ես այն երիտասարդներին, որոնք ճանապարհներն են փակել, որոնք գոռում են և պայքարում, որոնք իրենք իրենց անտարբերության և առավել ևս քո զոհը չեն:
Ես քեզ եմ մեղադրում այս ամենի մեջ: Ես քեզ եմ մեղադրում, որ իմ երկիրը իմը չէ, ես քեզ եմ մեղադրում, որ այսօրվա երիտասարդը պայքարում է, բայց նաև անկարող է: Ես մեղադրում եմ քեզ, քեզ ու միայն քեզ: Դու ես հանձնել Իմ երկիրը այս մարդկանց ձեռքը, և տեսնելով, որ նրանք թալանում ու ավերում են քո երեխայի հայրենիքը, լռել ես և հանդուրժել: Դու վաճառել ես իմ երկիրը,երբ ես գիտակից չէի, ու դատապարտել ես ինձ՝ կրելու քո որոշումը: Իսկ հիմա սպառնում ես, որ կարտագաղթե՞ս, որովհետև չես կարողանում պահել երեխաների՞դ: Գնա:

Մարիամ Հայրապետյան

Լուսանկարը՝ Սերյոժա Բաբոյանի

Արտենի համայնքի հեղափոխական օրերի քրոնիկոնը

Լուսանկարը՝ Անուշ Մուրադյանի

Առաջին քայլ

Ամեն ինչ սկսվեց ապրիլի 21-ին: Բոլորդ էլ տեղյակ եք, որ արդեն երկու շաբաթ էր՝ սկսվել էին խաղաղ ցույցերը, բայց մեր գյուղում առաջին գործնական քայլը կատարվեց վերը նշված օրը: Շաբաթ էր: Նախորդ օրը պայմանավորվել էինք ցույց անել և փակել Երևան-Գյումրի ավտոճանապարհը: Այդպես էլ եղավ: Ժամը մեկին մենք արդեն գլխավոր մայրուղու վրա էինք, քայլում էինք վանկարկումներով՝ «Մերժիր Սերժին», «Մենք ենք տերը մեր երկրի» և այդ օրերին արդիական մյուս վանկարկումներով: Մինչև մեր գնալը այնտեղ կային մոտ երեք տասնյակ բնակիչներ մեր համայնքից, բայց նրանց նպատակը այլ էր: Նրանք արդեն փակել էին ճանապարհը, հետո բացել էին ոստիկանների միջամտությամբ: Մեր բնակիչներից մեկը ասում էր.
-Բողոքում ենք, որովհետև ջուր չկա, որ ոռոգենք ու բերք ունենանք, եթե կա էլ՝ շատ քիչ են հատկացնում:
Սակայն երբ մեր՝ այլ պահանջ ունեցողների խումբը միացավ, մենք նրանց առաջարկեցինք այս պահին միանալ մեզ, քանի որ իրենց հարցը ավելի բարդ և քննարկելի հարց էր: Ոստիկանները մոտեցան մեր խմբին.
-Ո՞րն է ձեր պահանջը:
-Մեր պահանջը Սերժի հրաժարականն է, և մենք աջակցում ենք Երևանում հավաքված բազմությանը և միանում ենք նրանց,- ասացի ես:
Իրոք, ես մի քանի օր չէի հաշտվում այն մտքի հետ, որ մեր ապագայի համար պայքարում են միայն երևանցիները, իսկ մեր գյո՞ղը … Ու վերջապես ոտքի ելանք:
Բավականին ցուրտ օր էր:
Մենք որոշեցինք կրկին փակել ճանապարհը: Սկսեցինք ճանապարհի եզրից քարեր դնել ճանապարհին և փակեցինք մայրուղին: Նստեցինք այդ քարերի վրա և սկսեցինք վանկարկել, մոտ 2-2.5 ժամ փակվեց ճանապարհը, որի ընթացքում շատերը բանակցում էին.
-Այ երեխաներ, բացեք ճանապարհը, տուրիստ եմ տանում:
-Բացե՛ք, հա, հիվանդանոցից եմ գալիս:
Ու այսպես շատ պատճառաբանություններ: Մի տատիկ ասում էր.
-Ոչինչ, ոչինչ էլ չե՛ք փոխելու, բացե՛ք:
-Տատի ջան, մի ծաղկով գարուն կգա,- ասաց համայնքի բնակիչներից մեկը:
-Է՜հ…
-Տատի ջան, դուք ունեցել եք ընտրության իրավունք: Համոզված եմ, որ 10.000 էլ եք վերցրել, ու «ոչ մի բան չի փոխվելու»-ն ձեր արդարացումն է: Սա մեր քայլն է, մի հանդիմանեք,- ասացի ես:
Դե իհարկե, աշխատում էինք հանգիստ խոսել, բայց նրանք բոլորը հուսահատեցնում էին մեզ ոգևորելու փոխարեն, միայն մատների վրա հաշված ավտոմեքենաների վարորդներ կային, որ ժպտում էին ու ասում.
-Ապրե՛ք:
Ու միացնում էին ազդանշանները: Այդտեղ մեր համայնքի քիչ մասն էր, բայց այնքան սեր և միասնություն կար մեր մեջ, որը ես երբեք չեմ մոռանա:
Մենք բացեցինք ճանապարհը, և այդ օրը «Նիկոլենց» թիմը իմացավ, որ մեր համայնքը իրենց հետ է:

Երկրորդ քայլ

Սերժ Սարգսյանի հրաժարականի օրը՝ ապրիլի 23-ին, մեր հարևան Արագածավան համայնքի մոտ 7 տասնյակ բնակիչներ եկան մեր գյուղ, և երաժշտությամբ ու պարերով նշեցինք հաղթանակը:
Մենք արեցինք մեր քայլը ու հասկացանք, որ մի ձեռքն էլ ծափ կտա, եթե կա գաղափարի միասնականություն:

Երրորդ քայլ

Այս ամենը շարունակվեց նաև մայիսի 2-ին: Այս անգամ Արտենիի հիմնական և միջնակարգ դպրոցների, հիվանդանոցի, գյուղապետարանի աշխատակիցների հետ միասին նորից ճանապարհ փակվեց, երգեր, պարեր, և այս անգամ վանկարկում էինք. «Նի-կո՛լ, վար-չա-պետ»:

Չորրորդ քայլ

Եվ կարծես մեր և բազմահազար մարդկանց վանկարկումները տեղ հասան: Մայիսի 8-ին հաղթեց թավշյա, սպիտակ հեղափոխությունը, և այդ օրը պապիկս ասաց.
-Նիկոլը գեղարվեստական հեղափոխություն արեց՝ սիրուն ու խաղաղ:
Իրոք, չլսված ու չտեսնված քայլը կատարվեց մեր փոքրիկ ու մեծ երկրում: Մենք ինչ-որ չափով կրթվեցինք, գործնականորեն «շփվեցինք» մեր իրավունքների հետ և զարգացանք որպես Հայաստանի հպարտ քաղաքացիներ: Շատերը հիմա էլ են թերագնահատում, բայց ես հավատում եմ ու սպասում եմ ու գիտեմ, որ հայ ազգին իր հավատի չափով կտրվի, դուխո՛վ:

Ինեսա Զոհրաբյան

Հեղափոխության՝ օվկիանոսից այս կողմ անցած ոգևորությունը

Վերջապես եկավ այն Հայաստանը, որին այսքան երկար ժամանակ է՝ սպասում էինք ողջ ազգով: Այն ամենը, ինչ հիմա կատարվում է Հայաստանում, ամենագեղեցիկ և ոգեշնչող բանն է, որ տեսել էի ծնվածս օրվանից: Մեր ժողովուրդը, որ միշտ հպարտանում էր իր փառավոր անցյալով ու պատմությամբ, այսօր արդեն իրավունք կունենա հպարտանալ իր ոչ պակաս փառավոր ներկայով՝ ապացուցելով, որ մենք այն նույն ազգի զավակներն ենք, որ մի օր ծովից ծով Հայաստան է ունեցել:
Ինչպես գիտես, սիրելի՛ բարեկամ, հիմա Հայաստանում չեմ, չնայած այն բանին, որ այս պահին աշխարհում ամենաշատը այդտեղ կուզեի լինել: Բայց հավատա, որ տեղյակ եմ ամեն անցուդարձից, քեզ հետ միասին ապրում եմ բոլոր զգացումները:
Քեզ հետ միասին մերժում եմ, քեզ հետ միասին ոգևորվում, հուզվում ու ըմբոստանում:
Շարժման առաջին օրվանից սկսած՝ այն ոգևորությունը, որ սփռված էր Հայաստանում, անցավ օվկիանոսը և ինձ էլ հասավ: Հավատա՝ ամբողջ կյանքում այսքան ուշադրությամբ ու ոգևորությամբ լուրերին չէի հետևել, ինչ վերջին մեկ ամսում, երբեք ժամերով նստած ուղիղ եթեր ու ԱԺ պատգամավորների ելույթներ չէի նայել ու սրտի թրթիռով քվեարկության արդյունքների չէի սպասել:
Գիտե՞ս՝ շատ դժվար է, երբ սիրտդ մի տեղ է, դու՝ ուրիշ: Իմ սիրտը մեր հայրենիքում է, քո կողքին, բայց մեր միջև է ընկած հսկայական օվկիանոսը, որը այս պահին անհնար է դարձնում իմ՝ ֆիզիկապես կողքիդ լինելը: Կուզեի այդտեղ լինել և քեզ հետ միասին դասադուլ անել, ճանապարհները փակել, հրապարակում ժամերով կանգնել ու հանրահավաքի մասնակցել:
Մտքումս բացի հեղափոխությունից ուրիշ ոչինչ չկա: Տանեցիների հետ խոսելիս անընդհատ նույն թեման եմ բացում: Բայց էլ ի՞նչ ուրիշ թեմայի մասին է խոսքը, երբ հայրենիքումդ կատարվում է այդքան բաղձալին ու անհավանականը:
Մոտ երկու շաբաթ առաջ՝ ապրիլի 22-24-ին, Չիկագոյում էի 50-ից ավելի այլ փոխանակման աշակերտների հետ՝ աշխարհի տարբեր ծայրերից եկած: Մեր տարեվերջյան հանդիպումն էր՝ տարին ամփոփելու և հավաստագրեր ստանալու համար: Առաջին բանը, որ 23-ի առավոտյան արեցի, արդեն սովորություն դարձած, լուրերը նայելն էր: Եվ այն, ինչ տեսա, կյանքում առաջին անգամ ինձ ստիպեց ուրախությունից լացել. դա ժողովրդի հաղթանակն էր: Ուրախությունից բոլորին պատմում էի, թե ինչ է կատարվում Հայաստանում: Իսկ օրվա ընթացքում մեր կազմակերպության նախագահը ինձ կանչեց իրենց սեղանի մոտ և ցույց տվեց մեր հաղթանակի մասին հոդվածը: Ես հպարտորեն ժպտացի ու ասացի, որ գիտեմ ու ամբողջ օրը այդ լուրերին եմ հետևում: Հետո, երբ պատրաստվում էի նորից վերադառնալ ընկերներիս մոտ, լսեցի կոորդինատորիս՝ ասելիս. -Փաստորեն, մարդիկ փողոց դուրս գալով իրոք կարողանում են մի բան փոխել:
Սիրելի՛ բարեկամս, այն, ինչ անում ես հիմա Հայաստանում, բոլորի հետ միասին մեզ ամբողջ աշխարհի համար օրինակ է դարձնում:

Հ. Գ. Հիացմունքս ու ոգևորությունս առաջին հերթին ժողովրդիս կամքի ու ուժի համար է, և հետո միայն՝ քաղաքական առումով:

Աննա Անդրեասյան

Լուսանկարը՝ Անահիտ Բաղշեցյանի

Իմ քայլի պատմությունը

Սովորական օր էր բացվել Գյումրիում, ես էլ սովորականի նման առավոտյան արթնացել ու դասի էի գնում: Ճանապարհին մտքումս քննարկում էի Երևանում կատարվող իրադարձությունները, մտածում էի, որ հարկավոր է նմանատիպ ցույցեր կազմակերպել նաև Գյումրիում, չնայած՝ ցույցեր կազմակերպելու փորձ բացարձակ չունեի, ուստի եթե նման փորձ ունեցողները քայլ անեին, ես էլ կմիանայի նրանց, որպեսզի ցույց տամ, որ բողոք ունեմ իշխանության դեմ:
Քայլարշավը սկսվել էր Գյումրիից՝ քաղաքից, որտեղ ցանկացած ընտրության ժամանակ ինչքան էլ իշխանությունը խարդախություն էր փորձում անել ու կաշառք էր բաժանում, նույնիսկ ձայները կեղծելով՝ չէր հաղթում: Միգուցե դա էր պատճառը, որ միշտ ըմբոստ գյումրեցին հիասթափվել ու համակերպվել էր, որ ոչինչ չի փոխվի:
Մտածում էի ու քայլում, հանկարծ ճանապարհին տեսա մի խումբ երիտասարդ ցուցարարների ու ինքս ինձ որոշեցի, որ եթե նույնիսկ մեծերը հիասթափված են, ուրեմն ես ու իմ հասակակիցները պիտի մեր բողոքը անհնազանդությամբ ցույց տանք: Ու ես հայտնվեցի բողոքող ցուցարարների մեջ: Մթնոլորտը շիկացած էր, ու ես էլ՝ դրա մեջ:
Երբ տուն եկա, ձայնս էր կտրված, երկար քայլելուց փոշոտված էի ու արևահարված, բայց ուրախ էի, որ իմ մեջ կար հայրենիքումս քաղաքական փոփոխություն կատարելու մեծ ձգտում:
Եղել են պահեր, երբ ինձ փորձում էին համոզել, որ ես ինչ-որ մի օր պիտի թողնեմ հայրենիքս, ու ընտանիքով գնանք Հայաստանից: Ես միշտ դեմ եմ եղել, միշտ մտածել եմ, որ ուր էլ որ կյանքը ինձ տանի, միևնույնն է, Գյումրիից չեմ կտրվի և վերջում անպայման հետ կվերադառնամ:
Բացառությամբ այն դեպքերի, երբ հուսահատված ու հորս կարոտած եմ եղել: Մի խոսքով՝ շատ չխորանամ զգացմունքներիս մեջ ու ասեմ, որ երբ մտա տուն, մայրս անհանգիստ էր ու լարված, քանի որ գիտեր, թե քաղաքում ու հանրապետությունում ինչ է կատարվում: Ուստի անհանգիստ հայացքը ուղղեց ինձ ու զայրացած ասաց.
-Որտե՞ղ էիր, ի՞նչ էիր անում այսքան ժամանակ փողոցներում՝ սոված ու ծարավ:
Քանի որ շատ էր զայրացած, ձայն չհանեցի և լուռ անցա լվացվելու:
Ուզում էի մորս բարկությունը անցնի, նոր խոսեմ և բացատրեմ: Մայրս հուզված խոսում էր ու խոսում, ինձ հասկացնում, որ գործ չունեմ այդ թոհուբոհի մեջ, քանի որ ոչինչ չեմ փոխի, այն, ինչ «վերևներից» են թելադրում, այդպես էլ կլինի: Ինքն էլ լինելով պայքարող մարդ՝ շատ անգամներ է տեսել, թե ոնց են խեղաթյուրել հասարակ ժողովրդի հաղթանակները: Լռեցի, լռեցի, բայց այլևս չկարողացա լռել ու պոռթկացի՝ ասելով.
-Մա, ձեր սերնդի պայքարողները մեզ համար են պայքարել, բայց չեն կարողացել հասնել նպատակին, ու մեզ թողել եք այնպիսի երկիր, որտեղ ես չեմ ուզում ապրել, և ամեն անգամ ինձ հիշեցնում եք, որ այստեղ ապրելու տեղ չէ, և հնարավոր է, որ մի օր ես էլ Հայաստանից հեռանամ ու ապրեմ դրսում: Հասկացիր, ես դրսում ապրել չեմ ուզում: Մա, թող որ ես կերտեմ իմ ուզած Հայաստանը, իսկ եթե սխալվեմ, կիմանամ, որ դա իմ սխալն էր: Եթե հիմա նստեմ տանը ու ընկերներիս մենակ թողնեմ, երբեք ինձ չեմ ների:
Մայրս լուռ լսեց ու ասաց.
-Դե, որ էդպես է, գնա, Աստված քեզ հետ, միայն խնդրում եմ՝ ինձնից գաղտնի մի պահիր քայլերդ, ինձ տեղյակ պահիր՝ որտեղ ես և ինչ ես անելու, որպեսզի իմանամ ու հարկ եղած դեպքում կողքիդ լինեմ:
Ու ընդամենը վեց օր հետո ուրախ-ուրախ տուն մտա ու ասացի.
-Ի՞նչ էիք ասում, որ չի ստացվի, տեսա՞ք, որ ազգովի, երբ բռունցք ենք դառնում, մեզ չեն կարող հաղթել:
Աստված տա դեպի լույս տանող այս քայլը ավարտվի լիարժեք հաղթանակով, և Հայաստանում տիրի օրինականությունը, և երկրիս սահմանները լինեն անսասան, ու մենք հաղթենք թե՛ մեր մեջ եղած թշնամուն, և թե՛ արտաքին թշնամուն:
Իսկ նրանց, ովքեր կփորձեն իրենց օգուտը քաղել իմ սերնդի տարած հաղթանակից, զգուշացնում եմ, որ նորից կբռունցքվենք ու այն ժամանակ ավելի շոնդալից կհաղթենք:

Հովհաննես Սարգսյան

Լուսանկարը՝ Մարիամ Նիկողոսյանի

Սիրո և հանդուրժողականության դրվագներ

Լուսանկարը՝ Սուրեն Կարապետյանի

Ցույցերը նոր-նոր էին սկսվում Վանաձորում: Չէի մասնակցում: Էդ օրը որոշել էինք քաղաքում հարցում անել՝ ընդհանուր մթնոլորտը ճշտելու համար: Քայլում ենք, հարցնում, մարդիկ հուսահատ պատասխաններ են տալիս:
Մենք էլ ենք հուսահատվում: Մոտեցա մի տղամարդու: Հարցնում եմ՝ արդյո՞ք ցույցերին մասնակցում է, ի՞նչ կարծիք ունի: Պարզվեց Ռուսաստանից նոր է եկել, ու իր խոսքով ասած, «պալիծիկայով» չի հետաքրքրվում: Մի քանի օր հետո էդ մարդուն ամեն օր տեսնում էի ցուցարարների շարքում: Հուսամ՝ արդեն հետաքրքրվում է «պալիծիկայով» ու էլ Ռուսաստան չի գնա:
Ընդվզում էինք էլի: Վանաձորի փողոցներով քայլում էինք՝ հայտնի լոզունգները վանկարկելով: Տեսնեմ՝ մի կին հեռվից ժպտալով ինձ է նայում: Երբ մոտեցանք իրեն, առաջ եկավ ու գլուխս շոյեց, ասաց՝ ապրես: Էլ էդ կնոջը չհանդիպեցի, բայց ինքը ինձ համար հեղափոխության սիմվոլներից դարձավ:
Մերժման երկրորդ փուլում էինք արդեն: Փակ փողոցում կանգնած խոսում ենք: Շատ մարդ կա՝ ծանոթ-անծանոթ: Մի աղջիկ ուզում էր գրախանութ գնալ, խնդրեց միանամ իրեն: Ճանապարհին բարձր երգելով գնում ենք: Հասանք գրախանութ: Նվեր էր ուզում գնել իր ընկեր Անահիտի համար: Միասին մի սիրուն գրիչ ընտրեցինք: Խանութում բարձր խոսում ենք, վաճառողը նկատողություն արեց, թե՝ խուլ չեմ, մի քիչ կամաց խոսեք: Մենք էլ ասեցինք, թե բարձր խոսելը սովորություն է դարձել: Հետդարձի ճանապարհին էլի երգում էինք: Էդ աղջկա անունն անգամ չիմացա:
5-6 հոգով ընկած բաց փողոց ենք փնտրում, որ փակենք: Դժվար էր, բայց գտանք: Երջանիկ դեմքով նստեցինք մի կտոր բաց փողոցի վրա ու դա էլ փակեցինք:
Ես ու Անուշը փողոցում վազվզում ենք, կռվում՝ թե ով ավելի սիրուն կադր կստանա: Անուշը հաղթում է: Մարզպետարանի դիմաց նստած ենք: Պահանջում ենք, որ աշխատակազմը մեզ միանա: Դե, սոված ենք: Արսինեն պայուսակից մի կոնֆետ գտավ: Բաժանեցինք երեք մասի ու կերանք: Հրապարակի պապիկները խնդրում են, որ ինտերնետով տեսնեմ, թե Նիկոլն ինչ նոր հայտարարություն է արել: Կապերը ծանրաբեռնված են, ինտերնետից օգտվել չի լինում: Բացատրեցի պապիկներիս, որ չեմ կարող օգտվել: Ժպտացին: Հասկացան:
Հեղափոխությունը, լոռեցու ասած, կրեցինք: Գյուղ ենք գալիս գազելով: Մեքենայի մեջ թեժ քննարկում է. «Որ Նիկոլին Նարեկացու պես սրբերի շարքն էլ դասեն՝ ես համաձայն եմ», «Սա պատմության մեջ չլսված բան էր», «Ինչ անըմա, ժողովրդին աչոտ ա տալի, լա տենանք մինչև վերջ սհե շարունակվըմ ա՞»…

Սեդա Մխիթարյան

Լուսավոր Հայաստանը, ցանկալին, բայց իրականը…

«Նիկոլին, Սասունին, տղերքին ազատեցին, ժողովուրդ», ու միանգամից սկսվեցին ձայնային ազդանշանները, բոլորը (ծանոթ-անծանոթ) սկսեցին շնորհավորել միմյանց, լուրը տարածել: Այդ ընթացքում գտնվում էի Հրազդան-Երևան մայրուղու վրա: Ուրախացած հասանք Երևան՝ հանդիպելով բազմաթիվ խոչընդոտների՝ մի քանի անգամ մարդկանց համոզելով, ճանապարհները բացելով…
Ընկերներիս հետ Կասկադով իջնում էինք (դե, Մոնումենտը փակ էր) ու երբ հասել էինք ներքև, անվտանգության աշխատակիցը հայտնեց, որ Սերժը հրաժարական է տվել: Սկզբից չհավատացինք, բայց երբ դուրս եկանք, միանգամից կասկածները վերացան: Մի աղջիկ դրոշը ձեռքին խելագարի պես վազում էր, մյուսը՝ ճանապարհին հանդիպածներին (այդ թվում նաև ինձ) փաթաթվում էր…
Ամեն ինչ պարզ էր. մենք ազատ ենք ու անկախ…
Այստեղից էլ սկսեմ շարադրել բուն ասելիքս: Բոլորս իրականում միշտ էլ եղել ենք ազատ, անկախ մեր որոշումներում, գործողություններում, կարծիքներում (լավ, գրեթե միշտ), սակայն մենք՝ հայերս, ունեինք, այսպես ասած, «պաշտպանողական մարտավարություն»՝ ՀՀԿ-ն, Սերժը, Սաշիկը, ոստիկանությունը, սա, նա, նրանք, բոլորն են մեղավոր, բայց մենք՝ ոչ…
Ու այսպես տարիներ շարունակ: Սակայն ոչ ոք չէր ասում՝ աղբը այստեղ գցիր, հանրահավաքին արևածաղիկը գետնին թափիր, երբ բեմում մարդիկ ելույթ են ունենում, համերգ են տալիս, մտքեր արտահայտում, դու մեքենայիդ շարժիչի ու ձայնային ազդանշանի հզորությունը ցույց մի տուր (հաստատ քոնից ուժեղն էլ կա, եղբա՛յր): Այսօր ես գնացել էի հանրահավաքի (ավելի շուտ NEMRA լսելու համար, ու ինձ նման շատերը), բայց փոխարենը լսեցի՝ մի գնա, (Սարգսյանը շուտ ա գնացել, է), Ծաղկաձորից ջուր բերեմ, աշխարհը մերն ա…
Եկավ բարեգործական սնունդը… Սա լրիվ ուրիշ պատմություն ա: Ժողովուրդը, մոռանալով Փաշինյանին էլ, հանրահավաքն էլ, ինքնամոռաց վազեց հրապարակի ժամի տակ: Կես ժամ հետո սնունդը վերջացել էր, սակայն տոպրակների, պլաստիկ դատարկ շշերի պակաս հաստատ չկար: Էլ չասեմ՝ դատարկ ու հանրահավաքի հետ կապ չունեցող զրույցները: Դա ու էն անընդհատ ականջի տակ տեղի-անտեղի սուլողները (դրա անունը չգիտեմ): Հանրահավաքը վերջացավ, արդեն տասն անց էր, բայց ես ճանապարհին շարունակում էի լսել «մերժիր Սերժին», «Միացե՛ք» վանկարկումները, տարբեր տեսակի ձայնային ազդանշանները, մեքենաներից հաղթանակ գոռացող տարեկիցներիս…
Հասա Հրազդան, մի կատարյալ լռություն… Իսկ այդ լռությունն էլ ավելի բորբոքեց ներաշխարհս: Մենք արել ենք մեր քայլը, սակայն ոչ ամբողջությամբ, մենք կհասնենք կատարյալ հաղթանակի, եթե քայլ անենք ու մերժենք մեր միջի սերժին (նկատի ունեմ՝ փոխենք մեզ, ինքնակրթվենք…):
Շատ հոռետեսական ստացվեց, բայց նախընտրում եմ իրատես լինել և շարունակել մեր պայքարը, բայց այս անգամ արդեն մեր ներքինի դեմ…

Սուրեն Կարապետյան

Լուսանկարը՝ Լաուրա Սահակյանի

Հեղափոխության էյֆորիայից անդին

Հեղափոխություն, որ ինչ անուն ասես ստացավ (ժպիտի, բաց ձեռքերի, թավշյա, հանդուրժողականության, մեքենայի ազդանշանների, կաթսաների զնգոցի, դեղինի ու սիրո) մի երկրի համար, որ հոգնել էր սեփական իրականությունից, գուցեև չլիներ, բայց մեր մեջ դժգոհություն կար մի քիչ, որ պիտի դուրս գար ու լցվեր փողոցները…
Էս օրերին հոգեկան աշխարհումս զուգահեռ ուղիղներով անցնում էին հիասթափությունն ու ուրախությունը: Մյուս զգացմունքներն անհասկանալի գրաֆիկով վերիվարում էին՝ անընդհատ հատելով իմունիտետիս սահմանները:
Ամենասկզբից մի քանի հարյուր հոգանոց հանրահավաքի նկարներ ցույց տալ ծանոթ-անծանոթներին ու ասել, թե՝ «Հեսա Հայաստանում լիքը բան կփոխվի», լսել, թե՝ «Որ իմանամ ինչ-որ բան կփոխվի, առաջինը ես կմասնակցեմ: Սրանք սաղ վերևներից սարքած բաներ են, այ բալա» պատասխանը, հետո ավելի շատ հավատալ սեփական ուժերին ու ավելի շատ սիրել «երկիր, պետություն, հայրենիք» հասկացությունները, որ ինչ-որ պահի բաժանել էիր իրարից, բայց ինչ-որ չափով նյարդայնանալ ու նեղվել՝ երբեք ցույց չտալով:
Հետո տեսնել, որ բոլոր նրանք, ովքեր քո մի մասն էին դարձել վաղուց, փողոցներում անում են իրենց քայլը: Անասելի շատ սիրել ու հավատալ իրենց, քաջալերել ու հանգստացնել, գաղտնի որոշել միանալ՝ այդպես էլ համարձակություն չունենալով այդ մասին ասել տանը, ու չգնալ:
Հետո վերջապես հաղթել ինքդ քեզ ու փախչել դասից, ավտոբուսով անցնել տասնյակ կիլոմետրեր ու Հաղթանակի կամրջի մոտից ոտքով շարունակել ճանապարհը: Անընդհատ պատասխանել ծնողների, հարազատների ու ուսուցիչների զանգերին ու ստիպված վերադառնալ: «Ըմբոստության» համար թուքումուր ուտել ու մի քանի օր զրկվել հեռախոսից: Հասկանալ Կոելյոյին, որ «արգելված» թեմաներով զբաղվելիս՝ պետք է նաև խիզախություն ունենալ ու համակերպվել չհասկացված լինելու փաստի հետ: Բայց երբեք չկոտրվել չհասկացված լինելուց ու հավատալ սեփական հաղթանակին՝ ավելի ու

Լուսանկարը՝ Սերյոժա Բաբոյանի

ավելի շատ:
Մի քանի օր անց խիստ անձնական պատճառներից ելնելով չմիանալ դասից փախչող ու ցույցի գնացող մյուս աշակերտներին, ովքեր օրեր առաջ ծիծաղում էին քո «անիմաստ» փախուստի վրա, բայց մի քանի հարյուր անգամ ավելի շատ հպարտանալ, տխրել ու հպարտանալ, մի քիչ էլ՝ ամաչել:
Հետո ինչ-որ պահի կրկին միանալ ցուցարարներին, քայլել նրանց միջով՝ չմտածելով հետևանքների մասին, կոկորդը պատռելով գոռալ «Քայլ արա…», բայց չշարունակել՝ հասկանալով, որ խնդիրը էդքան էլ անձանց մեջ չէ: Մասնակցել ցույցերին, բայց երբեք «պարոն վարչապետի» հետ ունեցած կամ «միծինգի տեղից» արված նկարները չհրապարակել սոցցանցերում, գիտակցել, որ փողոց դուրս ես եկել նոր Հայաստանի համար, որտեղ հարգված են յուրաքանչյուր քաղաքացու իրավունքները, որտեղ աշակերտները ստանում են որակյալ կրթություն, ու ստիպված չեն լինում ամիսներ շարունակ շտեմարաններ անգիր անել բուհ ընդունվելու համար: Հայաստանի համար, որտեղ օրենքից բարձր ոչ մի ձայն չի հնչում, Հայաստանի համար, որտեղ Սահմանադրության առաջին 2 հոդվածներին քաղաքացին հավատում է ու ընդունում որպես բացարձակ ճշմարտություն:
Հետո ինչ-որ պահի տեսնել, որ էն, ինչ դու անում էիր նպատակիդ հասնելու համար, որոշներն անում են ինքնահաստատվելու կամ հաճույք ստանալու, գլուխ գովելու, ինչ-որ բան անել չցանկանալու համար, պատճառաբանելու կամ ժամանակ անցկացնելու համար:
Ու էս ամեն ինչը ներսումդ էնպիսի քաոսի է վերածվում, որ թվում է, թե ամեն ինչ անկառավարելի կդառնա շուտով, բայց երբ վեհ է նպատակը, ինչքան էլ որ հիասթափվում ես՝ տեսնելով առանց պետհամարանիշի մեքենաներ, որոնք սլանում են «ձայնի արագությամբ», խմիչք խմող ու արևածաղիկ կեղևազրկող մարդկանց, որ մնացորդները լցնում են որտեղ պատահի, նայում ես առաջ, հանդուրժում ու սիրով խնդրում աղբը թափել աղբամանում, զգուշության համար մի փոքր դանդաղ վարել մեքենան:
Հետո ամեն ինչ էնքան է խորանում, որ մարդիկ ճամբարների են բաժանվում, ու անհասկանալի կերպով որոշ մարդկանց գիտակցության մեջ մտնում է «ով մեզ հետ չի, մեր դեմ ա» կարգախոսը, որը դրդում է վիրավորել մարդկանց ու չհարգել մյուսների հայացքները: Ու այդպես իրարից բազմաթիվ մարդիկ են հեռանում:
Ու դու կամաց-կամաց համոզվում ես, որ սեփական արժեհամակարգ չունեցող մարդկանց համար գուցեև էս հեղափոխությունը շատ բան չփոխի:
Ու դու, այնուամենայնիվ, ինչ-որ պահի գիտակցում ես, որ հեղափոխությունից հետո, իրոք, շատ գործ կա անելու. սովորեցնել մարդկանց սիրել միմյանց ու էն աշխարհը, որում ապրում ենք:

Սարգիս Մելքոնյան

Լուսանկարը՝ Սոսե Զաքարյանի

Հաղթանակի ակնթարթներ

-Հերիք ա, աղջիկ ջան, էդ հեռախոսը մի կողմ դիր, էդքան որ նայում ես՝ ինչ-որ բա՞ն ա փոխվելու:
10 օր անընդհատ ես լսում էի այս նախադասությունը: Դե, քանի որ ես աղջիկ եմ ու դպրոցական, ինձ թույլ չէին տալիս գալ Երևան, մասնակցել ցույցերին ու հանրահավաքներին, իսկ դա ինձ համար իրոք սարսափելի էր: Ես հոգով Երևանում էի, ամեն վայրկյան ցուցարարների կողքին կանգնած: Անչափ ուրախանում էի, երբ ուղիղ հեռարձակումով տեսնում էի ընկերներիս, ուրախ էի, որ գոնե նրանք այնտեղ են ու պայքարում են նաև իմ փոխարեն:
-Ան, մի բան ասեմ՝ չես հավատա. Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց,- մայրս հայտնեց ինձ հաղթանակի լուրը:
Չեմ հավատում ու սկսում եմ լաց լինել: Մեկ էլ հանկարծ նկատում եմ, որ ես արդեն գնում եմ միանալու տոնին ու ցնծությանը:
Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր իմ փոխարեն այդքան պայքարեցին, ու խնդրում եմ, ներեք ինձ, որ ես ձեզ միացա միայն հաղթանակի ժամանակ:

Անուշ Հովհաննիսյան

Օպելի վարորդը

Մայիսի 8-ին Հրազդանից գնում էինք Երևան: Տաքսու վարորդը երևի երկար դադարից հետո պատանի էր տեսել և իր հակասական գաղափարներով ուզում էր համոզել.
-Էդ ո՞վ ա էդ Սասունը, որ վազեմ դրա հետևից: Դրա տված դուխն ի՞նչ պիտի լինի,- երկար բանավիճելու ընթացքում ավելի բարձր տոնով (համարյա բղավելով) ասաց վարորդը:
Մինչ այդ հնչած կարծիքներից հասկացա մի բան:
-Հնարավո՞ր է, որ դուք էլ պատռած լինեք ձեր կուսակցական տոմսը,- հարցրեցի ես ինձ հազիվ զսպելով:
-Վա՛յ, այ ախպե՛ր, չէ հա, ես անկուսակցական եմ,- ասաց վարորդն ավելի հանգիստ տոնով:
Ես նրան ի՞նչ ախպեր, ինչևէ, պատասխանեցի.
-Բոլոր հանրապետականներն են ասում այդպես:
Նա շարունակեց.
-Ախպե՛ր, էն 10 000-ները, որ բաժնին, ես չվերցրի, չէին ջոգում՝ որտեղից եմ, համ ընդեղ ընգեր ունեի, համ մյուս տեղում:
Կանգ առանք Քանաքեռի լուսակիրի տակ, ու վարորդն ասաց.
-Եթե ճիշտ, Սասունին եմ ընտրել, անգործ հրազդանցի եմ, բա ի՞նչ պիտի անեի:
Հիշեցի մի ուրիշ վարորդի էլ, որ նախորդ անգամ էր տուն տանում.
-Մեծ հույսեր եք կապել: Ոչ մի բան էլ չի լինի, չոտկի բան եմ ասում: Էդ փափուկ բարձը, որ դրել են գլխներիդ տակ՝ հանեք, ձեր ցավը տանեմ: Հենա՝ տղես դասից փախել, ցույցի ա գնացել, հլը թող տուն գա՝ ես իրան կասեմ:
-Գիտե՞ք, որ երեխաները ինքնուրույն որոշում կայացնելու իրավունք ունեն,- ասաց աղջիկներից մեկը:
-Տո ես դրանից բան չեմ հասկանում: Սերժի վախտով ինձ լավ գործ էին խոսք տվել՝ ես դզված դեմք պիտի լինեի: Հո ամբողջ օրը ռուլը չէի՞ գրկի նստի,- ոգևորված ասում է վարորդը:
Երեխեքով ասում ենք.
-Բայց մեր պայքարը, Նիկոլի վարչապետ դառնալուց բացի, անապահով ընտանիքների համար է, այսօր լիարժեք ազատ լինելու համար է:
-Էս երկրում վատ ապրող չկա, դու ի՞նչ ես խոսում: Սերժը պտի պահեր մեզ, ի՞նչ վատ ղեկավար էր, որ մերժիք,- ասաց վարորդը մեքենայի երաժշտությունից բարձր բղավելով:
-Սասունին ընտրել՝ Սերժի գովքն եք անում,- ասաց աղջիկներից մեկը:
-Տո ի՞նչ Նիկոլ՝ մի քանի շաբաթից իրեն եք մեժելու: Էնի երկիր պահող չի:
-Հակասական գաղափարներ ունեք,- ասացի ես ու իջանք մեքենայից:
Ու երևի վարորդը մինչև այսօր կես ժամը մեկ կրկնում է, որ սուտ է, բան չի փոխվելու, անօգուտ է ու ժողովրդի պայքարն անիմաստ է:
Ո՞վ գիտի Հրազդանից Երևան գնացող օպելի վարորդի տեղը, գնանք հարցնենք՝ ի՞նչ է հիմա մտածում:

Էմմա Միքայելյան

Քսան տարեկանների պայքարը

Վերջին օրերի մասին շատ է խոսվում, ու վստահաբար դեռ շատ կխոսվի: Անկախ նրանից, թե ինչ կլինի վաղը՝ այսօրը բոլորն են հիշելու:
Պայքարը առաջին օրից շատ անուններ ստացավ, շատ լոզունգներ ու կարգախոսներ գտավ, որոնք երկար են քննարկվելու ու հիշվելու: Պայքարը երգ ունի, որ փշաքաղեցնել կարող է անգամ չհավատացողին: Ուղղակի, որովհետև սա ժողովրդի պայքարն է:
Քաղաքացիների խաղաղ անհնազանդությունը բնութագրող անուններից մեկը, որ ամենից շատ տպավորվեց՝ «20 տարեկանների պայքարն» էր: Հեղափոխություն, ցույց կամ ապստամբություն՝ սրանց բոլորի համար առաջին շարժիչ ուժը երիտասարդությունն է: Ու ինչքան էլ ասեն, թե երիտասարդներին կառավարելը հեշտ է, հեշտ է նրանց ուղղություն ցույց տալը՝ երիտասարդը նաև ինքնակառավարվել, ինքնակազմակերպվել գիտի: Գիտի: Տեսել եք բոլորդ էլ, երևի: Տեսնում եք: Այս օրերը հույզերի իրական խառանշփոթ են առաջացնում:
Հետո՝ երկընտրանք: Մարդիկ, ովքեր ցանկություն ունեն միանալու, բայց մի բան իրեն հետ է պահում: Գիտեմ՝ ինչ-որ բան կորցնելու վախն է, մի կերպ ստացածը, ձեռք բերածը պահելու ձգտումն էլ: Որովհետև էստեղ, էս երկրում կորել էր ամենակարևորը՝ հավատը: Բայց գտանք նրան էլ: Ու Աստված մի արասցե՝ մեկը փորձի նորից հուսախաբ անել միավորված ժողովրդին:
Բայց դա կարևոր չէ, որովհետև նա, ով կանգնել է պայքարելու (կապ չունի՝ որտեղ, ինչպես) դա չպիտի անի դիմացինին ցույց տալու, թե տես՝ ես այստեղ եմ, ո՞ւր ես: Նա, ով ասում է, թե ողջ ժողովուրդն էսօր սիրում է իրար, ինչպես երբեք չի սիրել՝ պիտի ուժ գտնի կամա թե ակամա իր դեմ դուրս եկած ոստիկաններին էլ սիրելու: Մի քիչ, գոնե: Այս շարժման ամենամեծ գեղեցկությունն էլ երևի այն է, որ առաջնորդն ինքը օրինակ էր ծառայում ամեն տեսակի բախումներից խուսափելու: Ու նույնն էին անում անգամ նրա բացակայության ժամանակ:
20 տարեկանների պայքարն ունի իր բոլոր հնարավոր և անհնարին արդարացումները: Իսկ երբ բանը հասնում է տասը-տասնհինգ տարեկանների՞ն:
Գիտե՞ք՝ հպարտության ուժի ու մի քիչ էլ վախի զգացողություն էր մեջս, երբ տեսա նախկին դպրոցիս աշակերտներին՝ ցուցարարների մեջ: Հպարտությունը կրկնապատկվում էր նրանց կողքին ուսուցիչներ տեսնելիս: Բայց հարցն իրականում ավելի քան լուրջ է: Խոսքը անչափահասների անվտանգության մասին է: Նրանց կյանքի: Իսկ եթե նրանց ինչ-որ բան պատահի՞: Ոչ մի ապստամբություն, ոչ մի ցույց ու քաղաքական խաղ չպիտի վտանգի երեխաների անվտանգությունը, խախտի նրանց իրավունքները:
Երեկ, երբ գյուղիս երիտասարդները փակում էին Էջմիածին տանող ճանապարհը, թվում էր, թե կողքից հետևող մեծերի համար սա ընդամենը մի րոպե ավել ծիծաղելու առիթ է: Իմ գյուղի ու էնտեղ տիրող արժեքների դեպքում նորմալ է, մտածում էի: Հետո ճանապարհի կենտրոնում եկավ-կանգնեց ամենատարիքովներից մեկը: Այ, սա իրոք հաղթանակ էր: Մարդիկ գնալով ավելացան, ավելացան նաև հեգնական հայացքներն ու քմծիծաղը: Սա պայքարի մյուս կողմն է, որ ծածկում են վերջին օրերին իրար էսքան գնահատող ու հարգող մարդիկ: Իսկ երեխեքը հավատում էին: Ու նրանց հավատը ամեն տեսակ հեղափոխության հաղթանակի կհասցնի: Երբ նրանք ապահով են:
Երեկոյան աշակերտներից մեկի հետ էի խոսում: Ուզում են, շատ են ուզում դասադուլ անել, բայց վախենում են, մի քիչ: Հա, մի քիչ, շատ քիչ, որովհետև հաջորդ օրն արդեն դասադուլն ի՞նչ է, ուսուցիչ-ների հետ միանում են մարզի մյուս ցուցարար-ներին: Այսպես է Հայաս-տանի շատ դպրոց-ներում: Երեխա-ները պայքարել են ուզում, ուզում են բարձրաձայնել այն, ինչ բարձրաձայնելու իրավունք ունեն: Ուսուցիչներից շատերն էլ նույնն են ուզում: Ոմանք անում են, ոմանք՝ երկմտում:
Բարիկադների մոտ աշակերտներից ավելի փոքր տարիքի երեխաներ կան, ծնողների հետ, բնականաբար: Մի կողմից լավ է, որ ծնողները վստահ են՝ հազարների, տասը հազարների մեջ իրենց երեխաներն ապահով կլինեն: Մյուս կողմից՝ չգիտեմ ինչ մտածել, երբ տասը-տասնմեկ տարեկան երեխաները ելույթներ են ունենում հրապարակից: Խոսում մի բանի մասին, որ մեծահասակներին էլ անհասկանալի է: Պայքարը գեղեցիկ է, երբ ներսում ցուցամոլություն չկա, չկան արված քայլեր՝ մի բան ավել կամ պակաս ցույց տալու: Ի վերջո, նրանք երեխաներ են: Նրանց պայքարը հաղթական է թեկուզ միայն նրանով, որ կարողացան դպրոցները միացնել պայքարին, կարողացան ցույց տալ ուսուցիչներին, որ իրենց վախեցնելը, դասարանում փակելը հարցի լուծում չէ: Պատուհանները կողպել հաստատ չի հաջողվի, հետո՝ երեխեքը ԱԻՆ-ի համարը գիտեին:
Համացանցում էլ վիդեոներ են, որտեղ փոքրիկները ինքնուրույն փողոցներ են փակում: Աշակերտներից մեկն էլ լրագրողի հարցին՝ ինչն ես ուզում փոխվի, ասում էր՝ վարչապետը:
Բա ինչն ես ուզում, որ փոխվի կյանքում, ասաց՝ ամեն ինչ նորմալ ա, բայց ժողովուրդը գոհ չի: Երեխեք են, բայց թող պայքարը մնա 20 տարեկաններին:
Մինչ գրում էի՝ մենք հաղթեցինք…

Անի Ավետիսյան

Լուսանկարը՝ Միլենա Խաչիկյանի

Քայլ չանելու մասին

Շատերը ինձ մեղադրեցին զերծ մնալու համար ու առանց իմ դիրքորոշումը իմանալու՝ իրենց ցուցակում գրանցեցին որպես հանրապետական կուսակցությանը սատարող և ազգի թշնամի: Այս օրերին ես հասկացա մի պարզ բան, որ չի կարելի լինել փշալարերի և մեծամասնության մեջտեղում: Ծիծաղելի էր ծանոթներից ստանալ նամակներ՝ «Բարևիր Սերժիկիդ», «Նայի, էս էլ քո հանրապետականները», «Սխալ կողմ ես քայլ անում» բովանդակությամբ:

Լուսանկարը՝ Ղևոնդ Ամիրխանյանի

Ծիծաղելի էր այնքանով, որ ես ոչ մեկի կողմը չէի բռնել:
Գիտեք, կային մի խումբ մարդիկ, ովքեր խմեցին մի հաղթանակի կենացը, որը իրենցը չէր: Բայց հետո, երբ գալիս ես տուն, նստում համակարգչիդ առաջ ու կարդում ընկերներիդ գրառումները, նախորդ պատկերը լրիվ փոխվում է: Ու սկսում ես հասկանալ, որ այ, իրենք արժանի են հաղթանակի, որովհետև իրենք պայքարել են իրենց իսկ գաղափարների համար: Իսկ պայքարը հանուն գաղափարի խորը հարգանք և հպարտություն է ծնում իմ մեջ: Իրականում ոմանք ուղղակի իրենց արարքներով կոտրում էին մնացածի սիրո և հանդուրժողականության վրա կառուցած մթնոլորտը: Անհանդուրժողականությունը սկսվում էր կեղծ նորություններ գրելուց ու տարածելուց, հակառակ մտքերի ու գաղափարների համար մարդկանց վիրավորելուց: Ընկերներիցս մեկը ընկերոջ հետ խոսելիս ասաց. «Չեմ սիրում էս քաղաքականությունը. մարդկանց կռվացնում ա»: Ես էլ չեմ սիրում այն քաղաքականությունը, որտեղ անցնում են անձերին, որտեղ մեկը մյուսին չի հարգում: Իսկական հեղափոխությունը կլինի այն ժամանակ, երբ բոլորս հեղափոխվենք ներսից: Համակարգը կփոխվի, երբ մենք դադարենք կաշառք վերցնել, սկսենք գնահատել մարդկային հատկանիշները և խելքը, ոչ թե ծանոթ-բարեկամական հարաբերությունները, որ գնանք ընտրության ու մաքուր լինենք մեր խղճի առաջ:

Այս օրերին ես ուղղակի դիտողի դերում էի, և շատ բաներ նկատեցի, որոնք չեմ կասկածում, որ դուք էլ եք նկատել: Օրինակ, այն, որ շատերը չափից ավելին են ակնկալում իշխանափոխությունից: Ուզում եմ, որ մեր հասարակության որոշ մասը իջնի յոթերորդ երկնքից և հասկանա, որ հեղափոխությունից հետո թոշակները աստղաբաշխական թվերի չեն հասնելու, որ նույն ձևով շարունակելու ենք կոմունալ վճարումներ անել, բժշկությունը անվճար չի լինելու, կրթությունը նույնպես, և, որ մեր բազմոցներին նստած մեզ գումար ոչ ոք չի բաժանելու:

Ես չեմ ուզում, որ երկրի ղեկավարման պրոցեսում շարունակեն մնալ կեղծ մարդիկ, ովքեր բացի իրենց անձնական շահից ուրիշ ոչինչ չեն հետապնդում: Մեր ապագա վարչապետին ուզում եմ միայն մի բան խնդրել՝ չկոտրել այն հավատը, որ ունի ժողովուրդը, որ երբեք կարիք չլինի նորից մերժել ինչ-որ մեկին: Ուզում եմ խնդրել, որ պայքարը լինի միայն երկրի, այլ ոչ աթոռի համար: Ես չեմ ասի, որ այս ամբողջ ընթացքում ձեր կողքին եմ եղել, դա կլինի սուտ: Ես թերահավատորեն եմ մոտեցել ամենին, և վախեցել եմ Ուկրաինայի սցենարի կրկնությունից: Ուրախ եմ, որ սերը ավելի շատ էր:
Մի ատեք քայլ չանելու համար, ատելության էջը կարծես թե փակված է:
Խաղաղություն բոլորիդ…

Մարիամ Բարսեղյան

Իմ երազած Հայաստանը

Ինչպե՞ս կարող ենք կոչել այն երևույթը, երբ ուրախությունը համատարած է, սև քողով ապրած ազգը մեկ օրում սպիտակազգեստ է դառնում, «էս ինչ սերունդ է» արտահայտությանը փոխարինելու է գալիս «Ա՛յ, սա սերունդ է» արտահայտությունը, շուրջդ ժպիտներ են, տարեց մարդկանց աչքերում՝ հպարտություն, փողոցներում բազմաթիվ մարդիկ, ովքեր խորոված են անում, երգում, պարում: Չեք հավատա, բայց սա հայերիս՝ հեղափոխություն անելու մեթոդն է: Երգով, պարով փոխում ենք ամեն բան, ժպտում ենք մեզ հակառակ մարդկանց, բացատրում մեր պահանջն ու խնդիրը, և որ կարևոր է՝ լինում ենք հաստատակամ և միասնական:

Մեր ազգը միշտ էլ այսպիսին է եղել, ուղղակի մեզ պետք էր մի «դուխով» մարդ, ով կկարողանար անել առաջին քայլը և իր հետևից տանել մնացածին: Ով էլ սկսեր շարժում, ժողովուրդը կգնար նրա հետևից, միայն թե վախը այսքան տարիներ խեղդել էր, և ոչինչ փոխել չէր ստացվել:

Վախը այն էր, որ ոստիկանը ձեռք կբարձրացնի հայրենակիցների վրա, որ վիճակը անկառավարելի կդառնա, մարդիկ կսկսեն չհամբերել, չլսել միմյանց: Այս ամենին եղավ համապատասխան լուծում, մարդիկ հենց ցույցերի ժամանակ կարողանում էին այնպիսի իրավիճակներ ստեղծել, որոնք ունեին հերոսներ և, ամենակարևորը, ասելիք: Ոստիկան Աշոտը, Իռայի ամուսինը, Լեյլա տատիկը, փողոցի կենտրոնում դիոլ նվագող հայ աղջիկները, ճանապարհի գծերին նստած գիրք ընթերցողները, ոստիկանական վահանը անձնավորող աղջիկները, ծննդյան օրը Ֆրանսիայի հրապարակում լուսացնող երիտասարդը, հաղթանակի վերջին օրը սիրելիին ամուսնության առաջարկ անող տղան, և բոլոր նրանք, ովքեր մի ողջ պատմություն կերտեցին Երևանի ծածուկ ու հայտնի փողոցներում՝ ներկայացրեցին հայի պայքարող, մի փոքր գիժ և հաղթող տեսակը:

Անընդհատ ուզում եմ խոսել այս հեղափոխության չերևացող կողմերի մասին, պատմել իմ աչքով տեսածն ու լսածը, պատմություններ, դեպքեր, որոնք երբեք իմ կյանքից չեն անհետանա, այլ ընդհակառակը, մի ժպտացող երազի նման կուղեկցեն ամբողջ կյանքի ընթացքում:

Լինել հեղափոխության սերնդի մի մասնիկ և գլուխը բարձր քայլել, աներևակայելի հաճույք է: Այո՛, ինձ համար հաճելի է այն, որ ես մեկ ամիս առաջ պայքարում էի, անգամ ձգտում էի բացատրել այն մարդկանց, ովքեր չէին ընդունում սկիզբ առած շարժումը: Բայց ահա եկավ մի պահ, որ ես կրկին կանգնեցի այդ նույն մարդկանց դիմաց և հպարտ հայացքս ուղղելով նրանց՝ ասացի. «Գաղափարները միշտ նույնն են եղել, ժամանակներն ու մեթոդներն են ուրիշ, իսկ մեր մեթոդները կարողացան կոտրել շատ հիմար կարծրատիպեր, այժմ հաղթելու համար պետք է լինել հստակ և դիպուկ: Եթե չեք հավատացել մեր խոսքերին, այժմ պետք չէ ձևացնել, թե մեր կողքին եք»:

Հեղափոխությունն ինձ սովորեցրեց երբեք իմ կարծիքը չթելադրել մարդկանց, ուղղակի բացատրել, իսկ հասկացողը կհասկանա: Սովորեցի լինել համբերատար, սովորեցի հակասություններ գտնել իմ և մնացած մարդկանց կարծիքների միջև, լսել բոլորի տեսակետները, և այսպես շարունակ: Ու ինձ թվում է, շատերն ինձ նման դարձան: Մենք սովորեցինք դիմանալ փորձություններին, վառվեցինք արևի ճառագայթներից, սոված մնացինք, հարվածներ ստացանք, և այդքանից հետո չկար ոչ մի դժգոհություն, մինչդեռ եթե ես տանեցիների խնդրանքով մի գործ անեի ու արևից վառվեի, դա կվերածվեր պատերազմի: Ստացվում է այնպես, որ հեղափոխությունը ոչ միայն երկրի իրավիճակ փոխեց, այլ նաև մարդկանց: Հայերը փոխվեցին դեպի ավելի լավը:

Հեղափոխությունը փոխեց մարդկանց, փոխեց այն աստիճան, որ երկրի նախագահը ցուցարարների հետ քոչարի է պարում, նախարարները ամեն երեկո ուղիղ եթերներով պատմում են իրենց քայլերի մասին: Մեզ մի շատ կարևոր քայլ է մնում անել. համբերել և կրթվել, երկիրը երկիր պահելու համար, և էն «դուխով» սերնդին կրթել, որ չունենա կաղալու ոչ մի ճանապարհ, և լինի ավելի համառ, քան մենք ենք:

Հենց այդպիսին է մեր երազած Հայաստանը:

Քնարիկ Մխիթարյան

Լուսանկարը՝ Սերյոժա Սարգսյանի

Լուսանկարը՝ Անահիտ Բաղշեցյանի

Երբ սերը հաղթում է ատելությանը

Ապրիլյան հեղափոխություն…
Լավ է հնչում, չէ՞: Ինձ էլ դուր է գալիս: Վստահ եմ, որ ոչ ոք մեզանից չէր կարող սպասել այսպիսի վերջաբանի, որն իրոք անմոռանալի էր: Սա երևի կլինի իմ կյանքի ամենամեծ պարծանքը, որի մասին ես մի անգամ չէ, որ կպատմեմ իմ երեխաներին, թե ինչպես սկսվեց այս հեղափոխությունը, մեր «Սիրո հեղափոխությունը»:
Ինձ համար ամեն ինչ սկսվեց երևի ապրիլի 10-ին: Ես եմ, Հայկը, Մարտինը, նստած գարեջուր ենք խմում, ու հենց էդ գարեջրի առաջ էլ առաջին անգամ քննարկեցինք ցույցերին մասնակցելու ու չմասնակցելու հարցը: Մի բան պատմեցի, ձեզ էլ պատմեմ:
95-96 թիվն էր: Մեր գյուղում անասնագողություն էր եղել: Քեռին, որ էդ ժամանակ դեռ 20 տարեկան էր, հավաք էր կազմակերպել գյուղում, նամակ էին գրել, սպասում էին, որ մյուս բոլոր գյուղացիները գան՝ ստորագրեն ու ուղարկեն էդ ժամանակի ԱԺ: Չեմ ասում՝ ով, բայց էդ ժամանակի մեր շրջանում կարևոր դեմքերից մեկը գալիս է մեր գյուղ ու ասում, որ ինչի համար ա սաղ էս, սա միամտություն ա, էս իշխանությունների դեմ խաղ չկա, դեռ մի 20-30 տարի էսպես գնալու ա, ու էդպես: Մեր վարպետներից մեկը՝ Խոջյան Սամսոնը, ով, ի դեպ, իմ ամենասիրելի ուսուցիչներից է, մոտենում է էդ մարդուն ու հարցնում:
- Հարգելիս, դու ինձանից ուժեղ ես, չէ՞:
- Դե հա, երևի,- պատասխանում է էդ մարդը:
- Որ ուզենաս, ինձ կծեծես, չէ՞,- երկրորդ հարցն է տալիս:
- Դե հա, երևի,- էլի պատասխանում է էդ մարդը:
- Բա որ հիմա սկսես ինձ առանց պատճառ ծեծել, ես էլ քեզանից թույլ եմ, չեմ կարա պաշտպանվեմ, բա գոնե չճանկռե՞մ քեզ:
Բոլորը ծիծաղում են, ու էդ մարդը գնում է: Կատակը կատակի հետ, բայց էս պատմությունը ինձ համար շատ խորը իմաստ ունի: Այսինքն՝ ի՞նչ, եթե քեզանից ուժեղ է, գոնե չպայքարե՞նք նրա դեմ: Ցույց չտա՞նք, որ մենք էլ մարդ ենք, մսից ու արյունից, մենք էլ ենք ապրել ուզում, մենք էլ իրավունքներ ունենք, ինչո՞վ ենք ձեզանից պակաս որ: Ես միշտ այս խոսակցությունը նմանեցրել եմ իմ կուրսընկերներից մեկի հետ խոսակցությանը, որտեղ ինքը ինձ ասում էր.
- Ասողը իրանք են: Կուզեն՝ դեմքիդ ցեխ կքսեն, կուզեն՝ չեն քսի:
Որին հաջորդեց իմ միայն մեկ արտահայտությունը.
-Լավ, թող քսեն, բա գոնե ձևական էլ «թուհ» չասե՞նք:
Որոշումը մեկ էր՝ գնում ենք ցույցի:
Ապրիլի 23-ին Սերժ Սարգսյանը վայր դրեց իր վարչապետական մանդատը, և ընդդիմությունը նրան ասաց, որ պետք է հավաքի իր իրերը: Պատմում են, որ նա ծիծաղել է: Ծիծաղել է մի մարդ, ով 2013 թվականի հունվարի 28-ին Եռաբլուրի պանթեոնում մի կնոջ օգնության աղերսանքներին պատասխանել է. «Եկել ես ստեղ, մեր տոնը խանգարում ես, որ ի՞նչ անես…»: Սա ողորմելի է: Ի՞նչն էր փոխվել մեր մեջ, հիմնականում մի բան: Սերժ Սարգսյանը փոխում է ՀՀ իշխանավարությունը նախագահականից վարչապետականի՝ տալով բոլոր լիազորությունները վարչապետին, որ ինքը դառնա վարչապետ:
Անկեղծ, մենք չէինք հավատում ոչ իշխող կուսակցությանը, ոչ ընդդիմությանը: Մեզ ոտքի հանեց ատելությունը: Մենք դուրս չէինք գալիս Նիկոլի կողմից, մենք դուրս էինք գալիս Սերժի դեմ, բայց հիմա ստացվեց այնպես, որ մարդը, ում հետևից մենք հիմա պատրաստ ենք գնալ, Փաշինյանն է, որովհետև հակասերժականներ կային և մինչև այս, սակայն նրանք ոչնչի չհասան, իսկ Նիկոլը կարծես նորամուծություն բերեց մարդկանց մեջ՝ ստիպելով

խաղալ իր օրենքներով, խաղաղ և բաց ձեռքերով, որպեսզի զերծ մնա բախումից և այն սխալից, որ կար մինչև հիմա: Անշուշտ, դա այն էր, ինչ մեզ պետք էր, սակայն ես մինչև վերջին պահն էլ վախենում էի, որ ժողովրդի համբերությունը կսպառվի, ու ժողովուրդը կմտնի ԱԺ ու պարզապես դուրս կհանի ՀՀԿ-ականներին:

Իսկ գիտե՞ք, երբ հասկացա ես, որ ուզում եմ Նիկոլին վարչապետ: Ամսի 13-ն էր, ԵՊՀ-ի դիմաց: Չկային դեռ նրանք, ովքեր վերջում պատմում էին, որ հեղափոխությունը իրենց անձնական հաղթանակն է, չկային նրանք, ովքեր վերջում խորոված էին անում ու շամպայն տրաքացնում: Նոր էինք դուրս եկել ԵՊՀ-ից: Որոշեցինք նստել, մի փոքր հանգստանալ: Նիկոլը նստեց արձանի դիմացի քարին, գրպանից հանեց չոր անձեռոցիկը ու մաքրեց քիթը: Էդ պահին ես հասկացա, որ սա այն մարդն է, ում ես ուզում եմ տեսնել վարչապետ: Մարդու, մեզ նման, հասարակ, մսից ու արյունից, կենդանի օրգանիզմ, որ ունակ է մտածելու ժողովրդի համար, քանզի ինքն էլ է այդ ժողովրդի մի մասնիկը:

Հետո եկավ ապրիլի 16-ը, ու տեղի ունեցավ բախումը: Երբ ոստիկանը կրակեց Հայի վրա: Ես չեմ ուզում վենդետա, բայց ժողովուրդը իրավունք ունի իմանալ այն մարդու անունը, ով կրակել է իր վրա:

Անկեղծ, և այդ օրը, և հետագայում, ինձ մի հարց էլ էր հուզում: ԲՏՌ բերելու իմաստը ո՞րն էր: Եթե ուզում էին մեզ վախեցնել, ապա նրանք մեզ շատ վատ են ճանաչում: Ադրբեջանը վաղուց է մեզ ուզում վախեցնել այդ կերպ, չի ստացվել, չի ստացվի և հետագայում: Միակ մյուս տարբերակը որ կա, ժողովրդի վրա կրակելու տարբերակն է: Եվ այսպես, ԲՏՌ բերելու իմաստը ո՞րն էր:

Կամ ինչո՞ւ ցույցերի ժամանակ ՀՀԿ-ն մեկ անգամ դուրս չեկավ ժողովրդի հետ բանակցությունների: Եթե նրանք այդքան ճիշտ են, ապա դուրս գան, մեզ էլ բացատրեն իրենց ճշմարտացիությունը: Միգուցե իրո՞ք իրենք էին ճիշտը, մեզ բացատրեին, գնային տուն: Իշխանությունը, որ վախենում է իր սեփական ժողովրդից, մի՞թե իշխանություն կոչվելու իրավունք ունի:

Հաջորդ օրերին մի բան եղավ: Մենք՝ ցուցարար հավաքվածներս, գալիս էինք մեկ պատճառով. բոլորս ատում էինք այդ իշխանությունը՝ ի դեմս ղեկավար Սերժ Սարգսյանի: Գալիս էինք մենք մի բանի համար, որպեսզի վերջ դնենք այդ խեղկատակին ու ապրենք նորմալ ու զարգացող երկրում: Բայց հետո ամեն ինչ փոխվեց, երբ տեսանք, թե ինչպես են նրանք բերման ենթարկում բոլորին, բոլորին անխտիր, ու թե ինչպես են գռեհիկ և ոչ պատշաճ վերաբերվում աղջիկներին:

Մեծ եղբայրս՝ Վազգենը, երբեք չի եղել ցուցարար: Թե տարկետման պայքարի ժամանակ, թե դրանից առաջ, նա չի մասնակցել ցույցերին, քանի որ չի տեսել որևէ տարբերակ, որևէ հնարավոր ելք, չի տեսել այդ հարցերի դրական ու ճիշտ լուծումը: Բայց երբ տեսավ, թե ինչպես են վերաբերվում մեզ՝ ցուցարարներին, ինչպես են քաշքշում աղջիկներին, առաջին անգամ իր կյանքում որոշեց գնալ ցույցի, ոչ հանուն Սերժի հեռացման, այլ հանուն մարդկանց, հանուն ժողովրդի: Եվ հաջորդ օրերին այդպես մտածող մարդիկ մեզ միացան, ու մենք այնքան շատացանք, որ եթե նույնիսկ ցանկանային բոլորիս բերման ենթարկել, այդքան մարդու խցերում չէին տեղավորի:

Եղան դեպքեր, եղան բախումներ նաև քաղաքացիների հետ, երբ ցուցարարները փակում էին ճանապարհը, իսկ մարդիկ գալիս էին և վիճում մեզ հետ: Մեկ անգամ չէ, որ ես փակել եմ ՍԱՍ-ի (Երիտասարդականի) ճանապարհը:

Մի պատմություն ՍԱՍ-ից:

Ապրիլի 17: Երիտասարդական: ՍԱՍ-ի մոտ: Փակել ենք ճանապարհը նստարաններով ու շինարարության համար նախատեսված քարերով, տեղ-տեղ աղբամաններով ու ստվարաթղթե արկղերով: Տղերքը զանգեցին ու ասացին, որ կարմիր բերետավորները դուրս են եկել փողոց ու սկսել են ճանապարհները բացել ու բերման ենթարկել: Բարեբախտաբար, մեր հումորը տեղն էր՝ ՍԱՍ-ն էլ մոտիկ: Գնեցինք քաղցր ծողիկներ, նստեցինք Մետրոնոմի անցումի քարերին ու սպասում էինք կարմիր բերետավորներին: Եկան, բացեցին, գնացին, իսկ մենք, մենք՝ ի՞նչ, մենք քաղցր ծողիկներ էինք ուտում: Անմեղ հայացքներով նայում էինք նրանց, կարծես մենք չէինք ճանապարհները փակել: Հետո հենց գնացին, 5 րոպե անց, էլի փակեցինք ճանապարհները: 10 րոպե հետո էլի եկան՝ եկան, բացեցին, գնացին, իսկ մենք, մենք՝ ի՞նչ, մենք էլի քաղցր ծողիկներ էինք ուտում: Էլի փակեցինք, էլի նստեցինք քարերին ու էսպես մի քանի անգամ, քանի դեռ չսկսեցին ուշանալ, ու մենք էինք ուզում զանգել ասել, որ փակել ենք՝ եկեք բացեք:

Ինչևէ, հաղթեցինք: Հաղթեցինք: Սա հեղափոխություն էր իշխանության և մեր մտածելակերպի: Մարդիկ հասկացել են, որ իշխանությունը նրանք չեն, իշխանությունը մենք ենք: Հիմա էսպիսի կատակ կա մեր մեջ, որ էլի Նիկոլի թիվն է եկել: Ու բարեբախտաբար, հենց այդպես էլ կա, որովհետև մեզանից յուրաքանչյուրիս մեջ է արթնացել այդ «Նիկոլ»-ը: Մարդիկ արթնացել են քնից ու հիմա հավատում են, որ արդեն գոյություն ունի արդարություն, իրավահավասարություն, խոսքի իրավունք: Մարդիկ արդեն իրոք պատրաստ են կռվել հանուն իրենց իրավունքների:

Այսօր եղավ առաջին ցույցը Տարոն Մարգարյանի դեմ: Մարդիկ չեն դադարելու պայքարել: Նրանք էլ են հավասար իրավունքներ ուզում: Վերջապես մարդիկ իրոք հասկանում են, որ պատմություն են կերտում, իսկ երբ դա հասկանում ես, իրոք սկսում ես կերտել:

Ու հիմա ի՞նչ է ստացվում: Ողջ երկիրը և իշխանությունը պատկանում են մի մարդու՝ վարչապետին, դա արվել է այն նպատակով, որ Սերժ Սարգսյանը ունենա լիարժեք իրավասություններ՝ անելու ինչ ուզում է: Իսկ հիմա նրան փոխարինելու է եկել Նիկոլ Փաշինյանը, և Ազգային Ժողովի ՀՀԿ խմբակցության մի շարք պատգամավորներ ասում են, որ պետք է սահմանադրության մեջ անել փոփոխություններ: Այսինքն, ի՞նչ է հիմա այստեղ կատարվում՝ իշխանության է եկել ժողովրդի թեկնածուն, իշխանության է եկել հենց ժողովուրդը, և ողջ երկիրը հիմա պատկանում է օրինապահ ու սահմանադրությամբ շարժվող մարդու: Իշխանության է եկել արդարությունը:

Վահագն Գիշյան

Սկսենք մեզանից

Թավշյա հեղափոխություն: Այս արտահայտությունը չնայած նրան, որ սովորական է թվում, այդքան էլ սովորական չէ: Դուք էլ եք, չէ՞, զգում այն սերն ու ջերմությունը, որը միանգամից տարածվում է այս արտահայտությունը արտաբերելուց հետո: Այս արտահայտությունը վերջին ժամանակներում դարձել է առօրյայումս ամենաշատ օգտագործվող արտահայտությունը: Ժպիտը դեմքիս քայլում եմ իմ ամերիկյան դպրոցում, գրկում ընկերներիս, «անտեղի» ծիծաղում: Շատերը մտածում են, որ տարօրինակ եմ դարձել: Վերջին ժամանակահատվածում ընկերներս բողոքում էին, որ անընդհատ սոցիալական ցանցերում եմ ու հեռախոսը ձեռքիցս վայր չեմ դնում: Դասի ժամանակ փորձում եմ ուղիղ եթերները նայել՝ չվախենալով, որ կարող եմ նկատողություն ստանալ: Մարդկանց ոգևորված պատմում եմ ամեն ինչի մասին, ինչ կատարվում է Հայաստանում: Շատերը հետաքրքրված են, ոմանք՝ ոչ այնքան, մի մասն էլ գաղափար անգամ չունի այդպիսի բաներից: Այսպիսի պահերին հայի կարիք ես զգում, գոնե մի հայի, ով լիովին կհասկանա քեզ, քանի որ օտարերկրացիներին ինչքան էլ բացատրես՝ նրանք միևնույն է, չեն հասկանա այնպես, ինչպես հայը:

Շատ դժվար էր այս ժամանակահատվածը իմ և իմ «ՖԼԵՔՍ» ծրագրի հաղթող մյուս ընկերների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր այս պահին հեռու են գտնվում հայրենիքից:

Բոլորիս ամենամեծ ցանկությունը հայրենիքում լինելն էր, մեր ընտանիքներին ու ընկերներին աջակցելը, ողջ ազգին աջակցելը: Չեմ ուզում երկար-բարակ խոսել հեղափոխության մասին, քանի որ ինքս ցույցերին չեմ եղել ու երևի չեմ զգացել ու հասկացել այն ամենը, ինչը որ զգացել են հազարավոր մարդիկ, ովքեր օրեր շարունակ մասնակցել են ցույցերին ու պայքարել մեր բոլորի ապագայի համար: Միայն կասեմ, որ ճիշտ է, ֆիզիկապես ձեզ հետ չէի, բայց հոգեպես ամբողջովին Հայաստանում էի: Այս օրերի ընթացքում շատ բաներ եմ վերլուծել, ինքս ինձ հետ քննարկել ու հասկացել: Միշտ հավատացել եմ, որ մենք կարող ենք փոխել Հայաստանը, մենք կարող ենք ստեղծել վառ ապագա, ու միշտ մի թաքուն երազանք եմ ունեցել, որ բոլորը այդպես մտածեն: Ամեն անգամ այս ամենի մասին խոսելիս շատերը քմծիծաղ են տվել, ասելով, որ երեխայի նման եմ մտածում ու վարդագույն ակնոցները պետք է աչքերիցս վերջապես հանեմ: Այսօր այդ նույն քմծիծաղ տվողները երևի ցուցարարների շարքերում էին:

Այն մարդը, ով նրանց հույս ու հավատ է ներշնչել ու այդքան մեծ սեր դեպի հայրենիքը, արժանի է լինել ՀՀ վարչապետ: Այդ խիզախ մարդը, որին շատերը անգամ չէին ճանաչում ու երբեք չէին հետաքրքրվել նրա գործունեությամբ, դարձավ այն ծրագը, ով միավորեց բոլորին՝ ստեղծելով լուսավոր ապագայի հույսեր: Հույսերը դարձան գործողություններ, իսկ գործողությունները տվեցին իրենց արդյունքը:

Շա՜տ-շա՜տ դժվար էր ինձ համար այս օրերին հայրենիքում չլինելը: Ինչպես ընկերներիցս շատերն են ասում՝ պատմական պահեր եմ կորցրել: Բայց գիտե՞ք, այսպիսի իրավիճակները միշտ օգնում են, որ ավելի արժևորես այն ամենը, ինչ ունես ու ավելի արժևորես հայրենիքդ: Համենայնդեպս, իմ դեպքում այդպես է:

Պետք չէ մտածել, որ մեկ կամ երկու ամսից Հայաստանը կփոխվի կամ արագ կզարգանա: Առաջին հերթին պետք է մտածենք ինքներս մեզ փոխելու, մեր քաղաքակրթությունը կոփելու մասին: Հենց սրանից էլ կսկսվեն զգալի փոփոխությունները: Հիմա ավելի ոգևորված եմ, որ շուտով հետ եմ գալու Հայաստան, ու այն ամենը, ինչը որ ինձ տվել է Միացյալ Նահանգները, ներդնեմ հայրենիքիս զարգացման գործում: Ինչպես տեսաք, փոքր ծրագը խավարը վերածեց լուսաբացի:

Հայաստանը ես եմ,
Հայաստանը դու ես,
ու յուրաքանչյուր հայ
Հայաստանն է, այնպես
որ, եկեք սկսենք ինքներս
մեզնից:

Հ. Գ. Շատ շնորհակալ եմ «Ազատություն» ռադիոկայանին, ինչպես նաև 17-ին՝ այս ամբողջ ընթացքում իմ ինֆորմացիայի գլխավոր աղբյուրները լինելու համար:

Սոնա Զաքարյան

Լուսանկարը՝ Միլենա Խաչիկյանի

Նկարները՝ Սերգեյ Սարգսյանի

Լուսանկարը՝ Հովսան Բաղդասարյանի

Փակեք գետի ճանապարհը՝ ջրհեղեղ կլինի,
փակեք ապագայի ճանապարհը՝ հեղափոխություն:

Վիկտոր Հյուգո

Թողարկումը պատրաստել են
Հայաստանի պատանի թղթակիցների ցանցի անդամները
Ցանցը հիմնադրել և ղեկավարում է «Մանանա» կենտրոնը

Երևան, Մաշտոցի 45Ա, բն. 40, հեռ. 58 16 70
էլ. փոստ. 17am.reporter@gmail.com
www.17.am, www.mananayouthcenter.org

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Մանանա-հրատ» ՍՊԸ
Վկայական՝ 02Ա046931 տրված՝ 31.12.1999